№ 255 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 255

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տելեֆոն № 253.

„ՐՕՍՍԻԱ“ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայումս, բացի Թիֆլիս քաղաքի միւս գործակալներից, Ընկերութեան գլխաւոր գործակալն է ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ ՆԻԿՈՆՕՎԸ—ԱԶՕՎ-ԴՈՆԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԱՌԱՎԱՐՉԻ ՈՐԴԻՆ։

Ընկերութեան գլխաւոր գործակալ նշանակված ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ ՆԻԿՈՆՕՎԸ լիազօրված է ապահովագրութիւններ ընդունելու հրդեհից, տալու ապահովագրական ընկալագրեր՝ դրամեր ստանալու իրաւունքով հանդերձ։ ՆԻԿՈՆՕՎԻ ԲՈԼՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՐԱՆ ԵՆԹԱԿԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ «ՐՕՍՍԻԱ» Ապահովագրական Ընկերութիւնը լիովին պատասխանատու է։

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կոպ. նամակագրոշմ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յանվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Հին բաժանորդներից խնդրվում է կացնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վշտահար Ալմաստ, Գէորգ, Ալէքսանդր և Ղեոնդ Տէր-Զաքարեանները, Զառղալամ Անանեանը և Լուսաբեր Յողոսեանը իրանց ամուսիններով սրտի կսկիծով յայտնում են իրանց ազգականներին ու ծանօթներին՝ առաջին երկուսը իրանց թանգագին անդրանիկ որդու, իսկ վերջիններն իրանց սիրելի եղբօր՝

ԱՒԵՏԻՍ ԳԷՈՐԳԵԱՆ ՏԷՐ-ԶԱՔԱՐԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 13-ի երեկոյեան։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, նոյեմբերի 16-ին, առաւօտեան ժամը 10½-ին հանգուցեալի բնակարանից (Պեկովսկայա և Նօվո-Արբնանսկայա փողոցների անկիւն, № 4) դէպի ս. Կարապետի եկեղեցի։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։

1275. 1—1

ՀԱՅՈՑ ՈՐԲԱՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խորին շնորհակալութիւն է յայտնում Սօֆիա Իվ. Գրիգորեանցին՝ Ընկերութեան օգտին 50 ր. նուիրելու համար ի յիշատակ հանգուցեալ ամուսին Զաքարիա Գրիգորեանցի։ Վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում նաև Ելիզավէտա Գեր. Սուլթան-Շահին ի յիշատակ իր Գէորգ որդու 10 ր. նուիրելու համար։

առ։ 1276. 1—1

ԿՐԹՎՈՂ ՄԵՐՆԴԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» նախանցեալ համարում (№ 253) բժիշկ Քաթանեան հրաւիրում է մեր դպրոցական վարչութիւնների առանձին ուշադրութիւնը դէպի աշակերտների ֆիզիկական զարգացման խնդիրը և անհրաժեշտ է գտնում պարտաւորական կերպով մտցնել մարմնամարզութիւնը մեր դպրոցներում։ Նա ասում է՝

Լաւ դիտելով ներկայումս մեր կորաքամակ, մկանազուրկ, դալուկ աչքերով, կախ ընկած ուսերով, չափազանց նեղազուրկ, նիհար և առհասարակ թոյլ և ակար ուսանող սերունդին, մարդս ակամայ զարմանում և իրաւացիօրէն զայրանում է, թէ ինչո՞ւ, ո՞ր հիմնաւոր պատճառներից ստիպված Գէորգեան ճեմարանում, Ներսիսեան, Գալատանեան, Յովհաննեան և առհասարակ մեր բոլոր թեմական և ծխական դպրոցներում չեն ուսանում մարմնամարզութիւնը պարտաւորապէս։

Եւ առհասարակ պէտք է նկատել, որ մեր դպրոցները քիչ հոգատարութիւն են ցոյց տալիս դէպի առողջապահական հանգամանքները։ Բացի մի քանի դպրոցներից, որոնք ունեն բաւարար շէնք, մեծամասնութիւնը անճխիթարական վիճակի մէջ է։ Եւ յաճախ մենք տեսնում ենք, որ դասարաններում քիչ լոյս և օդ կայ, նրանք ազատ չեն խոնաւութիւնից, չունեն յարմարութիւններ աշակերտների զբօսանքների համար, ենթակայ են միջանցուկ քամիների։

Այդպիսի պայմաններում զարմանալի չէ, որ առողջ մանուկը, յաճախելով դպրոց, քայքայում է իր կազմուածքը և դպրոցից դուրս գալուց յետոյ ներկայանում է իբրև թոյլ և հիւանդ մի արարած։

Մտնել դպրոց առողջ և դուրս գալ հիւանդ—դա անկարելի է։

Լինել աշխատանքի ընդունակ, ժիր ու ուժեղ դպրոցից առաջ և դառնալ թուլամորթ ու վախեցող գործից—դա աններելի և անմարսելի մի երեւոյթ է։

Մենք յանցանք ենք գործում մեր մատաղ սերնդի վերաբերութեամբ։

Մենք պէտք է տանք նրան յարմարութիւններ առողջութիւնը պահպանելու և աւելի ևս ամրացնելու և ոչ թէ հիմնական անպատեհութիւններով ու անհոգատարութեամբ քայքայելու և թուլացնելու նրա կազմուածքը և առողջութիւնը։

Դպրոցը չէ կարող անտես առնել առողջապահական պահանջները, նա պարտաւոր է լրջօրէն զբաղվել նրանցով և ապահովել իրան յանձնված մատաղ կազմուածքների բարեկեցութիւնը։

Ճիշդ է՝ միանգամից չէ կարելի և նոր շէնքեր կառուցանել և անհրաժեշտ յարմարութիւններ ստեղծել, բայց անմիջապէս պէտք է գործադրել այն, ինչ որ աւելի շուտ իրագործելի է։ Եւ այդ վերջինների շարքում կարելի է դասել մարմնամարզութեան ներմուծումը։

Դպրոցական առողջապահութեան հարցը բոլորովին անծանօթ մի բան չէ մեր հայկական իրականութեան մէջ։ Նա եղել է յարուցված և ունեցել է իր փոքրիկ պատմութիւնը։ Բայց նա չը ստացաւ այն հանրային, կազմակերպչական նշանակութիւնը, որը պէտք է սիստեմական գործունէութեան մի հիմնաւոր սկիզբ դառնար։

Այն, ինչ որ կիսատ է մնացել, պէտք է այժմ լրացնել։ Դպրոցական առողջապահութեան պահանջները պէտք է ճանաչվեն հրամայողական և պարտադիր։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 14 նոյեմբերի

Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի ծննդեան օրվայ առիթով Ալէքսանդրեան պալատում Բարձրագոյն ներկայութեամբ մատուցվեց պատարագ և կատարվեց գոհաբանական մաղթանք։

Պետերբուրգի բոլոր եկեղեցիներում մատուցվեցին հանդիսաւոր պատարագներ։ Զանազան քաղաքներից ստացվեցին հեռագիրներ կատարված մաղթանքների և զօրահանդէսների մասին։ Զանազան քաղաքներում բանտարկեալների վիճակը նահանգապետները թեթևացրել են։ (Հ. Գ.)

Մոսկվա, 14 նոյեմբերի

Ուսանողների և ուսանողուհիների չորս փորձերը՝ ցոյցեր կազմել փողոցներում և հրապարակներում՝ ցրվեցին սուսերի հուսարների, կազակների և հեծեալ քաղաքապահ ոստիկանների խմբերով։ Ոչ ոք չը վիրաւորվեց։ Ձերբակալվեցին 181 ցուցարարներ, որոնցից երեքը կանայք են. ձերբակալվածները ենթարկվում են ադմինիստրատիվ տուգանքների պարտադիր որոշումները խախտելու համար։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 13 նոյեմբերի

Զանազան քաղաքներից հեռագրում են, որ շքեղ կերպով տօնել են Պիրագովի ծննդեան 100-ամեակի օրը։

Նոյնպէս հաղորդում են Լ. Ն. Տոլստոյի յիշատակը տօնելու մասին բազմաթիւ քաղաքներից։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 13 նոյեմբերի

Հարցապնդումների մասնաժողովը մերժեց հարց տալ Կովկասի Փոխարքային այն առիթով, թէ ճի՞շդ է, որ Բուքարայի գիմնազիայի դասատու Կուստինովիչը վիրաւորել է վրացի աշակերտների ազգային զգացմունքը։

Գրաւվեց «Русск. Знамя»-ի № 256-ը։ Դուբրովինը պատասխանատուութեան է ենթարկվում։

Կոնսերվատորիայի մեծ դահլիճում, որ զարդարված էր ծաղկեայ պսակներով, ծաղիկներով և Տոլստոյի բիւստով, լի գրականութեան, գիտութեան, գեղարուեստի ներկայացուցիչներով և հասարակական գործիչներով, տեղի ունեցաւ Տոլստոյէ յիշատակին նուիրված միացեալ գրականական, ուսումնական և կրթական ընկերութիւնների նիստը։ Մակսիմ Կովալէվսկին ճառ արտասանեց Տոլստոյի վարդապետութեան մասին և առաջարկեց յարգել ոտքի կանգնելով մեծագոյն հանճարի յիշատակը։ Բոլորեքեան կանգնեցին մի քանի րոպէ խոր լռութեան մէջ։ Յետոյ ճառեցին զանազան ընկերութիւնների և հասատութիւնների նախագահները։

Այսօր գիշերս կալանաւորվեց պրոֆէսիոնալ միութիւնների կենտրոնական բիւրօն։ (Հ. Գ.)

Մոսկվա, 13 նոյեմբերի

Քաղաքապետը «Русск. Вѣд.»-ի խմբագրութեանը ենթարկեց 500 ռուբլի տուգանքի № 259 ում հրացանային գործարանի աշխատանքների դադարեցման մասին տեղեկութիւններ տպելուն համար։

Քաղաքապետի հրատարակած պարտադիր կանոններով արգելվում են ամեն տեսակ համախմբումներ և ժողովներ հակապետական կարգերի համար։ Ցանցաւորները ենթարկվելու են 500 ռուբլի տուգանքի կամ մինչև երեք ամսով բանտարկութեան։

Պիրագովի ծննդեան 100-ամեակը տօնվեց հանդիսաւորապէս։ (Հ. Գ.)

Հելսինգֆորս, 13 նոյեմբերի

Սէյմի ուղերձի պատճառով սենատը վճռեց ամենայարատակ խնդրագրով միջնորդել թոյլ տալու մշակել գերագոյն դատարան հաստատելու նախագիծ, որի իրաւասութեանը ենթարկվի գերագոյն վարչական դատավարութիւնը, որ ներկայումս գտնվում է սենատի տնտեսական ատեանի տնօրէնութեան ներքոյ։ (Հ. Գ.)

Լոնդոն, 14 նոյեմբերի

Երեկոյեան մինիստր Չերչիլի վրա գնացքի մէջ յարձակվեց սուֆրաժիստականների կողմակից մի տղամարդ։ Ուղեկցող ոստիկանները կատաղի բռնցքամարտից յետոյ կալանաւորեցին նրան։ (Հ. Գ.)

Լոնդոն, 13 նոյեմբերի

Ասկվիտը Հոլլում ճառի ժամանակ յայտնեց, որ լիբերալ կուսակցութեան պլանը բնաւ հետամուտ չէ երկիրը կառավարել մի պալատով։

Լիվերպուլից դուրս եկած արագ գնացքը Օրմսկերկում ընդհարվեց մարդատարի հետ։ Արագ գնացքի ճանապարհորդներից մէկը սպանվեց, մի քանիսը վիրաւորվեցան։ (Հ. Գ.)

Վիէննա, 13 նոյեմբերի

Չեխ կուսակցութիւնները պագատաւորների պալատում լեհական կօլօյի օրինակով կազմեցին միացեալ կլուբ։ Նախագահ ընտրվեց երիտասարդ Ֆիդլէր։

Գերմանական մամուլը ողջունում է Կրամարժի երէկվայ պարտութիւնը, որի փոխարէն ընտրվեց Ֆինանսների նախկին մինիստր Ֆիդլերը։ (Հ. Գ.)

Պրագա, 13 նոյեմբերի

Լրագիրները գտնում են, որ Ֆիդլէրի ընտրութիւնը ստեղծում է ժամանակաւոր կացութիւն։ «Նարօդնի Լիստի» թերթը մատնանշում է, որ Ֆիդլէրը երբէք չէ զեկավարվել քաղաքականութեամբ։ Կրամարժին չընտրելով ազգային շահերը վտանգվում են։ «Նարօդնօ Պոլիտիկան» խիստ լեզուով է խօսում Կրամարժի դէմ։ (Հ. Գ.)

Բրիւսսէլ, 13 նոյեմբերի

Թագուհին գիշերը հանգիստ անցրեց. հիւանդութիւնը ընթանում է կանոնաւոր։ (Հ. Գ.)

Բրիւսսէլ, 14 նոյեմբերի

Հավասի և Ռէյտերի գործակալութիւնները հերքում են թագուհու առողջութեան մասին տարածված յուզալի լուրերը։ (Հ. Գ.)

Աթէնք, 14 նոյեմբերի

Կառավարութեան և հասարակական կարծիքի անհանգստութիւնը հելլէնների թագաւորի անունից կրէտական ժողովը բանալու առիթով՝ վերջացաւ։ Յունատանը մտադիր է խիստ կօրրէկտ վերաբերվել դէպի Կրետէն, Թիւրքիան և հովանաւորող պետութիւնները։ Թիւրքիայի բողոքը ազդեցութիւն չունեցաւ։ (Հ. Գ.)

Բուէնոս-Այրէս, 13 նոյեմբերի

Ուրագանը քաղաքում և գաւառում մեծ աւերումներ գործեց. արմատներից պոկեց հազարաւոր ծառեր, մի քանի մարդ սպանեց, շատերին վիրաւորեց։ (Հ. Գ.)

Ռիօ-դէ-Ժանէյրո, 13 նոյեմբերի

Ապստամբ «Ֆէօդորօ» նաւը կրակ բացեց զինապահեստի վրա։ Նաւերը չը սպասելով ամիրայի հրամանին՝ ծով մտան։

Երէկ պատգամաւորների պալատի նիստը փոթորկալի էր. տեղի ունեցան նոյնիսկ ծեծ ու ջարդ։ (Հ. Գ.)

Ռիօ դէ-Ժանէյրո, 14 նոյեմբերի

Երեկոյեան ժամը 7-ին ապստամբ նաւերը անձնատուր եղան։ Կառավարութիւնից նշանակված օֆիցէրները ստանձնեցին հրամանատարութեան պաշտօնները։ Հանդարտութիւն է։ (Հ. Գ.)

Նիւ-Եօրկ, 14 նոյեմբերի

Նիւ-Ջերսէյ նահանգում Պեպերբոզ ֆաբրիկայի հրդեհի ժամանակ 40 բանւորուհիներ, չը կարողանալով դուրս գալ, զոհվեցին։ Նրանցից 14-ը իրանց նեռելով պատուհանից սպանվեցին։ (Հ. Գ.)

Պէկին, 14 նոյեմբերի

Սահմանագրական պալատի պատգամաւորները խստագոյնս դատապարտեցին գերագոյն խորհրդի անդամներին։ Ճնշող մեծամասնութեամբ վճռվեց գահին ներկայացնել համապատասխան զեկուցում։ (Հ. Գ.)

Սէվաստոպոլ, 13 նոյեմբերի

Հիւրանոցում թունաւորվեցին Գանձակի ոստիկանապետ Զօզուլօվը և իր կինը։ (Հ. Գ.)

Մադրիդ.—Կանալէխասը զինուորական տօնի ժամանակ արտասանած ճառում ակնարկեց, թէ նոր հանրապետական ռէժիմը Պորտուգալիայում հաստատուն չէ։

Պարիզ.—Ցառեղոզ լսում ենք, որ Ֆրենտալը այստեղ նշանակվելու է աւստրիական դեսպան։ Այս լուրը սենսացիոն տպաւորութիւն թողեց պարլամենտական և կառավարական շրջաններում, նաև հասարակութեան մէջ։

Պետերբուրգ.— Նոյեմբերի 12-ին ցոյցի ժամանակ՝ աւելի կամ պակաս՝ լուրջ կերպով վնասվեցին 17 մարդ։ Լուրջ վիրաւորված են գլխից մի ուսանող և մի ուսանողուհի։

Պատգամաւոր Զիէիձէի գործը յանձնվեց ենթամանաժողովի, որը կորոշէ թողնել Սուլիպինի գրութիւնը անհետևանք։ («Ե.»)

Օդեսսա.— Քաղաքապետ Տօլմաչէվը արգելեց պիրագովեան մի շարք զեկուցումներ։

Աստրախան.—Զամբյի մատերը տեղի ունեցան խօլերայի 10 դէպք։

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍՐԻ ՇԱՌԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Բերլին, 13 նոյեմբերի

Լեդէբուրգը, պատճառաբանելով Վիլհելմ կայսրի վերջին ճառերի մասին սոցիալիստների ուղղած հարցապնդումը, ասում է, որ սոցիալիստները պահանջում են օրէնսդրական արգելումներ ստեղծել կայսրի անհատական այն ձգտումների իրականացման համար, որ նա պետական-իրաւական դրութեան վերաբերութեամբ գործադրում է միջամտելով երկրի քաղաքականութեանը։ Եթէ կայսրը սոսկ ըստ պառազինման մէջ տեսնում է խաղաղութեան պահպանումն, ապա ուրեմն նա դէմ է գնում իր կառավարութեան ջանքերին, որ Հաագայի կոնֆերէնցիային աշխատում էր ապահովել խաղաղութիւնը համաձայնութիւններով։

Լեդէբուրգը յիշում է Լէվ Տօլստոյին՝ պատերազմի և ժողովուրդների փոխադարձ սպանելու հսկայ հակառակորդին և խօսում է յոգնատ հանրապետական կազմի։ Նա իր ճառը վերջացնում է բացագանչելով. «Վերջ ի վերջոյ մենք յամենայն դէպս կը հասնենք մեր հանրապետական իդէալին»։

Աշակողմեանների աթոռներում ուժեղ աղմուկ է բարձրանում։

Կանցլերը պատասխանում է Լեդէբուրգի ճառին և ապացուցում է, որ

սոցիալիստները ղեկավարվում են առահմանադրութիւնը տածած կատաղի թշնամութեամբ։ Լեհէբուրգը հրապարակով կուսակցութեան անունից առաջինը այդպէս պարզօրէն պարզաբանվեց հանրապետական կազմի օգտին։ Կայսրի՝ Կեօնիգսբէրգում խօսած ճառը չէ պարունակում բացարձակ հակասահմանադրական հայեացքներ, այլ լոկ ուժգին կերպով ընդգծում է միապետական սկզբունքը, միացած այն խոր կրօնական համոզմունքի հետ թէ՝ պրուսական թագաւորները թագաւորական արժանապատուութիւնը ստացել են ոչ թէ ժողովրդի ձեռքից, այլ ձեռք են բերել շնորհիւ Հոհենցօլէրն միապետների անորակելի ջանքերի՝ տոկուն ու գործունեայ ազգաբնակութեան աջակցութեամբ և ստեղծել են պրուսական ժողովուրդը և պրուսական պետութիւնը։ Ուստի և պրուսական սահմանադրութիւնը չէ ճանաչում ժողովրդի գերիշխանութիւնը։ Պրուսական թագաւորները ժողովրդի նկատմամբ հանդիսանում են սեփական իրաւատէր թագաւորներ։ Թագաւորի անձնական անպատասխանատուութիւնը, միապետական իրաւունքի ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը կազմում են պրուսական պետական կեանքի էական գծերը։ Եթէ հինաւուրց պրուսական թագադիր քաղաքներում թագաւորը գործածեց տարադիցիոն «Աստուծոյ ողորմութեամբ» բանաձևը իբրև ներհակ ժամանակակից կարծիքի և յենվեց խղճի վրա՝ իբրև ղեկավար թելի վրա, դա ինքնին արդասիք էր սեփական իրաւունքների և պարտականութիւնների բովանդակ գիտակցութեան (ծափահարութիւն աջից)։ Վերջում կանցլերը ասաց. «Արտայայտելով այդօրինակ հայեացքներ թագաւորի դրութեան մասին, ես կանգնած եմ սահմանադրութեան հողի վրա և կը պաշտպանեմ այդ հողը, հաւատարիմ իմ պարտականութեան և քաղաքական աշխարհահայեացքներին»։

Պահպանողական կուսակցութեան լիդէրները կանցլերից պահանջեցին վերջ դնել սոցիալ-դեմոկրատների մշտական արշաւանքներին ընդդէմ կայսրի։ Նացիոնալ-լիբէրալները խնդրեցին կանցլերից հոգալ, որպէսզի կայսրը ձեռնպահ մնայ ճառերից։ Ազատ մտածողները և սոցիալիստները խստագոյնս նատապարտեցին կայսրի ճառերը, պընդելով թէ այդ ճառերը յարուցանում են ժողովրդի դժգոհութիւնը։ (Հ. Գ.)

ԹՒՒԲԻՆ ԵՒ ՊՈԼՈՒՍՈՏԱՆ

Կ. Պոլիս, 13 Նոյեմբերի

Տեղս եկած բոլգարական լիազօրները բանակցութիւններ սկսեցին Ֆինանսների մինիստրի հետ՝ թիւրք-բոլգարական առևտրական պայմանագիր կնքելու մասին։ Ֆինանսների մինիստրը պատասխանելով Օսմանեան բանկի բողոքին՝ մտադիր է վերջինիս իրաւունքը պետական գանձատան պարտքերը արտօնեալ կերպով գեղջելու։ Այնուամենայնիւ Դէյտշէ բանկը ձեռնպահ է մնում գեղջելուց, մինչև որ հաշտութեամբ կը լուծվեն Օսմանեան բանկի հետ պատահած թիւրիմացութիւնները։

Ապատամբված արաբական շէյխ իմամեանի եպիդրիսը խրեց հեռագրական հաղորդակցութիւնը Եմէնի և Թիւրքիայի միջև, պաշարեց Ասիրի գլխաւոր քաղաքը՝ Գօէն, որի մէջ գտնվում են 5 վաշտ թիւրք զօրքեր։ Բաղդադի վալին օգնութեան համար ուղարկեց 7 վաշտ։

Պարսից հաւատարմատարը երկրորդ անգամ քողոքեց պարսկական հողը թիւրք զօրքերով գրաւելու դէմ։

Դեմոկրատները և լիբերալները կազմեցին օպոզիցիոն կուսակցութիւն, որի մէջ մտնում են 60 պատգամաւորներ։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 13 Նոյեմբերի

«Տանը» հերքում է, թէ Բօմպարը յայտնել է վէզիրին, իբր Ֆրանսիական ֆինանսական շրջանները մտադիր չեն դժուարին կացութիւն ստեղծել Թիւրքիայի համար և արգելք լինել թիւրքական վերջին փոխառութիւնը Պարիզում դրամափոխութեան ենթարկելուն։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 13 Նոյեմբերի

Վերջին 12 բառալիոնները յետ կանչվեցին Ալբանիայից, սակայն մի քանի տեղերում պատերազմական դրութիւն մտցնելը և մահմեդականներին զէնք բաժանելը ցոյց են տալիս, որ լիակատար հանգստութիւն դեռ ևս չը կայ։ (Հ. Գ.)

—

Կանէա, 13 Նոյեմբերի

Գործադիր կոմիտէի նախագահ ընտրվեց կառավարական կուսակցութեան թեկնածու Կրիարիսը։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 13 Նոյեմբերի

Աստրաբադի նահանգապետ նշանակվեց պրինց Աման-Խամլա միրզան, Ղազվինի նահանգապետ նշանակվեց Տիսաբ-ուլ-Միւլքը, որ Մուզաֆֆէր-Էդդին շահի մարդկանցից է։ (Հ. Գ.)

—

Բագու, 14 Նոյեմբերի

Պարսկական սահմանագլխին սահմանապահ պահակախմբի հետ հրացանաձգութեան ժամանակ սպանվեցին 2 պարսիկ աւազակներ, ծանր վիրաւորվեց մի պահակ։ (Հ. Գ.)

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 28 հոկտեմբերի

Քիւրդական աւազակութիւնները վերջին օրերում շատ աւելի մեծ համեմատութիւններ են ստացել։ Սայիդ բէյը արդէն ծայր աստիճանը հասցրել է իր յանդգնութիւնը. գիւղեր ու ճամբորդներ թալանելուց ու կողոպտելուց զատ, սպառնալիքներ է ուղարկում քիւրդ ու հայ հարուստ ճանաչվածներին ու դրամ պահանջում, կամ ճամբորդներ գերի է առնում ու փրկանքից յետոյ միայն արձակում։ Արդէն յիշում ենք, որ սա այն աստիճան յանդուգն եղաւ, որ մի տարէ անակնկալ կերպով յարձակում գործեց Արճակի կառավարութեան վրանի վրա ու հրացանաձգութիւններով 4 մարդ սպանեց։ Վալի Բէքիր բէյ դիմեց «Դաշնակցութեան» շէֆերին ու 30-ի մօտ դաշն. զինուորներ ուղարկեց Սայիդի վրա, բայց այս փորձն էլ ապարդիւն եղաւ, ու մի քանի ամիս դեռերեւոյթ յետոյ նրանք ձեռնունայն յետ դարձան՝ քիւրդ պետի թշնամութիւնը արծարծելով հայերի վրա, որին զոհ են գնում այժմ հայ գիւղացիները։

Կառավարութիւնը այժմ միայն բուռն ճիգեր է գործադրում ձերբակալելու համար Սայիդին. քիւրդ ցեղապետներին ազդու հրամաններ են տրվել հետապնդելու համար Սայիդին. ուղարկվել են նոյնպէս զօրքեր ու ոստիկաններ, որոնք շրջում են լեռնէ լեռ, գիւղից գիւղ՝ գտնելու համար նրա հետքը. բայց մինչև այժմ չէ աջողվել, այլ միայն մի քանի օր առաջ կալանաւորվեց Սայիդի եղբօրորդին, որ նրա աւազակախմբում գործում էր։

Քիւրդ ցեղապետներից է կախված Սայիդի կալանաւորումը, որովհետև աւազակապետը անշուշտ նրանց շրջանումն է պահվում. թէև անցեալ շաբաթում Թագուրի աշիրէթի յայտնի պետ Հիսէյին բէյ փոխանակ նրան քիւրդ գիւղերում փնտռելու՝ Հնդոստան անուն հայ գիւղումն է փնտռում և այդ պատրուակով կողոպտել է տներից 400 ռուբլու արժողութեամբ իրեղէններ։ Հայ Գեղասէյներ փնտռելու պատրուակով էին երբեմն թալանվում հայ գիւղերը, այժմ էլ քիւրդ աւազակներ փնտռելու պատրուակով են թալանվում։ Մարակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵԾ ՄԱՐԴՈՒ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Լռեց Ռուսաստանի խիղճը, յաւիտենականութեան գիրկը մեկնեց՝ ինքը յաւիտենականութիւնը, իր մահկանացուն կնքեց՝ անմահութիւնը։

Չը կայ այլևս մարմնացեալ բարոյականութիւնը. անհետացաւ շրջուն գաղափարը. փակեց իր շուրթերը մարդկային մեծ խիղճը, որ XIX և XX դարերում,—ցոփութեան ու այլանդակութեան, հարստահարութեան ու վանդալութեան, արեան ու կախաղանի դարերում՝—հնչեցրեց իր ահեղ խօսքը, անգթօրէն մտրակելով այն ամենն, ինչ որ պիղծ է ու հակաքրիստոնէական, ինչ որ կեղծ է ու պատիր։

«Կեանք կայ, որ միայն իր համար է, կեանք կայ, որ միայն Աստուծոյ, այսինքն մերձաւորի,—ասել է Տօլստոյ,—Աստուած ապրում է բոլոր մարդկանց մէջ, սակայն ոչ բոլոր մարդիկ ապրում են Աստուծոյ մէջ. ահա թէ ինչու տառապում են մարդիկ». քանի որ ասում է Ռամակրիշնա, «ինչպէս ճրագն առանց նիւթի վառվել կարող չէ, այնպէս էլ մարդը առանց Աստուծոյ ապրել չէ կարող»։

«Սէրը կեանք է, սէրը խանգարում է մահվան,—ասում է Տօլստոյ.—ամեն ինչ կայ, ամեն ինչ գոյութիւն ունի, որովհետև ես սիրում եմ ընկերոջս։ Սէրը Աստուած է. մեռնել՝ նշանակում է ինձ սիրոյ մասնիկիս դառնալ կրկին ընդհանուր եւ յաւիտենական ոգիի։»

Տօլստոյ յաւիտենական սէր էր և յաւիտենական հոգի. նա Մարդու ճշմարիտ Որդին էր, քանի որ շնչում ու գոյութիւն ունէր մարդկութեան համար, ուստի և անմահ էր նա։ «Երկինքն ու երկիրն անմահ են,—ասում է փիլիսոփայ Լաո-Տսէն,—և երկնքի ու երկրի անմահութեան պատճառը կայանում է նրանում, որ նրանք գոյութիւն ունեն ոչ իրանց համար»։

Քանի դար էր Աստուածորդին իջել էր և մարդկանց սէր ու հաւասարութիւն քարոզել, իսկ մարդիկ աւելի գազանացել, աւելի կորցրել էին իրանց պատկերը, անհաւասարութիւնն աւելի ահռելի չափեր էր ընդունել։ Մի կողմը կանգնած էր մարմնացեալ յղփանքը, անարդարութիւնն ու բռունցքը, իսկ միւս կողմը՝ մերկապարանոց աղքատութիւնը, ցնցոտին ու հալածվածը. մարդու և Աստուծոյ միջի վիհը սոսկալի էր. հարկաւոր էր մի նոր Մարդու Որդի, մի նոր ողջակէզ, և եկաւ նա։ Այդ ողջակէզը Տօլստոյն էր։ Նա այնպիսի վեհութեամբ էր շրջապատված, այնչափ հեռու կանգնած մեզնից՝ ստորացած մարդկութիւնից, որ մենք առօրեայ կեանքի ցեխի մէջ մղտածներս, մենք ոսկէ հորթի, անարդ «հսկ» ու կրքի երկրպագողներս նրան անհունի գրկում հաղիւ էինք նշմարում. մենք հաղիւ էինք ըմբռնում նրա անմահ հոգու թռիչքները, նրա տենչանքը՝ հանճարեղ կերպով լուծելու մարդկային հոգին աղմկող յաւիտենական առեղծուածները։

Եւ նա հալածվում էր. նրա գլխին մենք դրինք փշեայ պսակ, սակայն առանց Գողգոթայի, առանց խաչի։ Նա սպասում էր փրկութեան բաժակին, սպասում կարմիր քղամիդին և իւղած պարանին ճկած վզով՝ բայց առանց հոգեկան մաքառումների, առանց կրկնելու «հոգիս յօժար է, բայց մարմինս տկար»։ Նրա և՛ հոգին, և՛ մարմինը յօժար էին... Սակայն ուր էր, չէր երևում ոչ բաժակը և ոչ խաչը, չը կային այն տենչալի պարանն ու խոնաւ բանը, որ այնպէս լիաբուռն տրվում էին ուրիշներին։ Զափազանց դաժան էր մարդկութիւնը։ Նա դառնութեան մրուրը տալիս էր նրան կաթիլ առ կաթիլ։ Նրա աչքերի առջև յօշոտվում էր մարդկային հոգին, խաչ բարձրացվում արդարութիւնն ու իրաւունքը և նա չէր հանդուրժում, նա գոչում էր՝ «չեմ կարող լռել»... Նա տքնում էր արար աշխարհին պատմել այն ոճիրը, որ կատարում էր նոյն աշխարհը յանուն մարդկութեան։

Նրա Դողգոթան աւելի սարսափելի էր, նրա խաչը չափազանց ծանր, կեսարը չափազանց սպանիչ, սակայն Տօլստոյը ապրեց, տանջվեց մարդկութեան համար։

Նրա վերջին խօսքն էր՝ «ինչու՞ էք այդչափ մէկի մասին մտածում, երբ միլիոններն են տառապում ու յօշոտվում»։

Աղօթենք նրա համար, բայց ոչ շուրթերով. թող մեր հոգին խօսէ նրա անմահ հոգու հետ, որովհետև Տօլստոյը համարեա մէկ դար աղօթում էր մեզ համար։ Նրա վեհ հոգին զարկում էր մեր հոգու դուռը, նա փորձում էր խօսել մեզ հետ, իսկ մենք խցել էինք մեր ականջները։

Երկնքից իջած մեծ ջահը լուսաւորեց հազարամեայ մարդկութիւնը և ինքն էլ հետզհետէ հալվեց. չը կայ նիւթը, սակայն շարունակվում է լոյսը։

Փշրվեց տաւիղը, բայց հնչվում է նրա ահեղ ձայնը։ Առ-Զէն

Մոսկվա, 9 Նոյեմբերի

ՄԵԾ ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏը

Պետերբուրգ, 10 Նոյեմբերի

Նոյեմբերի 9-ի առաւօտեան, ժամը 11-ին, հայոց եկեղեցում տեղիս հայերի երկսեռ խուռն բազմութեամբ հոգեւորականութիւնը կատարեց նորերս վախճանված Մեծ Ռուսուցիչ՝ Տօլստոյի հոգեհանդիսատը։ Ինչպէս եկեղեցում, նոյնպէս բակում ու Նեվսկի պրօսպեկտի վրա ամբողջ լայնութեամբ լցված էր հազարաւոր երկսեռ ուսանողութեան բազմութիւնը։

Ժամը 1-ի մօտերը եկան բոլոր բարձրագոյն դպրոցներից ուսանող-պատգամաւորներ՝ խնդրելու նորից կատարել հոգեհանգիստ, որ և տեղի ունեցաւ։ Ուսանողութիւնը սկսեց շարժվել դէպի «Գազանսկի» տաճարը, գլխաբաց, երգելով երեք անգամ „Вѣчная память“, բայց շուտով ոստիկանութիւնը, որ այդ օրն ամեն կերպ հսկում էր, վրա հասաւ և ցրեց բազմութիւնը։ Մի առ ժամանակ հայոց եկեղեցու դուռը ոստիկանութիւնը շրջապատեց և թոյլ չէր տալիս ուսանողութեան ներս մտնել։ Նեվսկում երթևեկութիւնը դադարեց 10—15 րոպէ։ Վ.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 8-ին կայացաւ Լազարեան ճեմարանի ուսանողների խորհրդակցութիւնը, որ նուիրված էր Լ. Ն. Տօլստոյի յիշատակը յարգելու հարցին։

Որոշվեց ի նշան սգի դադարեցնել դասընթացները 3 օրով և միջնորդել պրոֆէսօրների խորհրդի առաջ դնել մեծ գրողի պատկերը 1-ին կուրսի առդիտորիայի մէջ։ Նոյն ժողովում ընտրվեց մի պատգամաւորութիւն 3 ուսանողներից՝ արմաւենու ճիւղ դնելու համար Լ. Ն. Տօլստոյի գերեզմանի վրա։ Ի վերջոյ յարգվեց Տօլստոյի յիշատակը ոտի կանգնելով։

Նոյն օրը կայացաւ ճեմարանի դիրեկտորը պրոֆէսօր Միլլերի նախագահութեամբ Լազարեան ճեմարանի պրոֆէսօրների արտակարգ նիստը, ուր քննվեց Լ. Ն. Տօլստոյի յիշատակը պատելու հարցը։ Որոշվեց կոմսուհի Ս. Ա. Տօլստոյի անունով հեռագիր ուղարկել Եասնայա Պոլեանա։ Պատգամաւորութիւն ընտրվեց արմաւենու ճիւղ դնելու համար մեծ գրողի գերեզմանի վրա։ Ի նկատի ունենալով այն, որ հանգուցեալ Լ. Ն. Տօլստոյ ուսումնասիրում էր արևելեան լեզուները և իր գեղարուեստական գրուածքներում յաճախ շօշափում էր Արևելքը, որոշվեց ոսկէ մէդալ սահմանել Լ. Ն. Տօլստոյի անուան։ Այդ մէդալը կը տրվի ճեմարանի այն ուսանողին, որը կը ներկայացնի լաւագոյն հեղինակութիւն «Արևելքը Լ. Ն. Տօլստոյի գրուածքներում» թեմայի վրա։ Հեղինակութիւն ներկայացնելու ժամանակամիջոցը որոշված է եկող տարվայ հոկտեմբերի 1-ը, իսկ մէդալ տալու հանդէսը կը կատարվի Մեծ գրողի տարեդարձի օրը։

ՈՒՂՂԱՓԱՌ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ԸՆԿ. 50-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԸ

Կիրակի օր՝ Փոխարքայի պալատում տեղի ունեցաւ Ուղղափառ Քրիստոնէութիւնը Վերականգնող Ընկերութեան 50 ամեայ յօբելեանի տօնակատարութիւնը։

Հանդէսը տեղի ունեցաւ Սպիտակ դահլիճում։

Նախագահում էր Վրաստանի էկզարքոսը։

Նիստին ներկայ էին Փոխարքան՝ իր ամուսնու հետ, Փոխարքայի խորհրդի անդամները, զանազան հաստատութիւնների և ժամուլի ներկայացուցիչներ, ուղղափառ եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, ուսուցիչներ և աշակերտներ։

Նախ կարդացվեց Թագաւոր Կայսրի հրովարտակը, որով նա պարգևատրում է էկզարքոսին, տալով բրիլիանտի խաչ՝ կրելու խորքի վրա, երկրորդ՝ Մայր-Թագուհու հեռագիրը, որով նա շնորհաւորում է յօբելեանը, երրորդ՝ Ընկերութեան պատասխանը Թագուհուն։

Այնուհետև խօսեցին վրաց սինօդական դրասենեակի կողմից նշանակված ներկայացուցիչը, Թիֆլիսի Վրաց Աղնուականութեան պարագլուխ Թումանով, կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուզօվի, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, զանազան ընկերութիւնների, վանքերի, մենաստանների, դպրոցների, հասարակական հիմնարկութիւնների և ազգաբնակութեան ներկայացուցիչներ։

Պլատօնով կարդաց մի ժանրամսան զեկուցում ընկերութեան գործունէութեան մասին։

Աշակերտները երգեցին և արտասանեցին ողջունաւորներ։

Ե. Վէյդենբաուն կարդաց մի զեկուցում կովկասեան Փոխարքայի վարչութեան մասին դէպի Ներկայ Ընկերութիւնը։

Փոխարքայի կողակների երգեցիկ խումբը երգեց հոգևոր կօնցերտի մի քանի կտորներ։

Վերջում էկզարքոսը շնորհակալութիւն յայտնեց եղած ուղերձների և շնորհաւորութիւնների համար և յորդոր կարդաց շարունակելու սկսված գործունէութիւնը։

Հասարակութեանը բաժանվեց յօբելեանական ընկերութեան տեղեկագիրը գեղեցիկ կազմված։

Կողքի դահլիճներում պատրաստված էին թէյ, քաղցր ըմպելիներ և անուշեղէններ ներկայ եղողների համար։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Շաբաթ, Նոյեմբերի 12-ին, Թիֆլիսի քաղաքային ձայնաւոր Ա. Մ. Բաբեանը կարդաց մի բէֆէրատ «Էժան բնակարանները» թեմայով։

Նախ քան դասախօսութիւն սկսելը, ակումբի աւագներից Գ. Մ. Թումանեանը առաջարկեց յոնկայս յարգել Լ. Տօլստոյի յիշատակը։ Սրանից յետոյ Ա. Բաբեանը սկիզբ տալով իր խօսքին, ասաց, որ ներկայ սոցիալ-տնտեսական կեանքում, այլ հրատապ հարցերի շարքում, կարևորագոյն հասարակական էական բնոյթ կրող հարցերից մէկն էլ էժան բնակարանների խնդիրն է, որոնց բացակայութեան շնորհիւ առանձնապէս տառապում է բանւոր, ընչազուրկ դասակարգը։

Դասախօսը բազմաթիւ օրինակներ առաջ բերեց այդ հարցը ուսումնասիրող Եւրօպայի գիտնականների դիտողութիւններից։

Ապա յիշեց այդ հարցի լուծման մի քանի ձևեր, օրէնսդրական կարգեր, որոնց հիման վրա, այդ հարցին որոշ լուծում տալու համար, եւրօպական երկիրներում մշակվում են մինիմալ առողջապահիկ պայմաններ, բանւորական հանրակացարանների նկատմամբ։ Այլ և այլ երկիրներում այդ հարցի լուծումը դրվում է այլ և այլ պայմաններում։ Օրինակ՝ գերմանական պարտադիր օրէնքը առանձին ուշադրութիւն չէ դարձնում բնակարանների առողջապահական դրութեան վրա, այլ աշխատում է տառապացնել նրանց թիւը։ Այս կարգի հոգածութեան առարկաները գլխաւորապէս գերմանացի պետական պաշտօնեաներն են։

Ֆրանսիայում կազմվում են ընկերութիւններ էժան և առողջապահիկ հանրակացարաններ շինելու համար։

Հոլանդական կառավարութիւնը նման բնակարաններ կառուցողներին զրամական նպաստներ է հայթայթում, որոշ պայմաններով, ժամանակի ընթացքում հանգցնելու պարտքը։

Իտալիայում քաղաքային ինքնավարութիւնները հողաբաժիններ են յատկացնում այդ կարգի հանրակացարանների համար։

Դասախօսը ապա տուեց մի կարգ եւրօպական խոշոր բարերարների անուններ, որոնք այդ նպատակով խոշոր գումարներ են նուիրաբերել։ Անցնելով բնակարանների վարձի նօրմային, նա ասաց, որ Անգլիայում, գլուխ, իւրաքանչիւր բանւորական բնակարանն արժէ ամսական մօտ 1 ր., որն ունենալով ամեն Ղարմարութիւններ, այնուամենայնիւ, օգուտ է բերում, չը նայած գների էժանութեան։ Լայպցիգում երեք սենեակից բաղկացած բնակարանն արժէ մօտ 54 ռուբլի։

Առաջին տեղը այդ հարցի բաւարար լուծման գործում գրաւած ունի Գլազգօ քաղաքը իր հանրակացարանների բազմութեամբ ու առողջապահութեամբ։

Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ Գլազգօ քաղաքի ինքնավարութիւնը այդ կարգի բնակարաններից խոշոր օգուտներ է ստանում, իսկ շնորհիւ այդպիսի մրցութեան, ժամանաւոր բնակարանատէրերը էժանացնում են բնակարանների գները։

Կան տեղեր էլ, որտեղ բացի Լժան բնակարաններից, բնակիչներին տրվում են առողջ և ժամչելի գներով կերակուրներ։

Ամերիկայում տարածված է էժան հիւրանոցների տեսակը, իրանց բոլոր յարմարութիւններով, որտեղ ոգելից ըմպելիների գործածութիւնը արգելված է։

Այդ հիւրանոցները հոգում են նաև բանւոր բնակիչների մտաւոր սնունդի նկատմամբ ևս, հիմնելով հիւրանոցներում գրադարան-ընթերցարաններ։ Կան տեղեր, որտեղ բնակարանները կառուցվում են կօօպերատիվ հիմունքներով։

Ապա անցնելով Ռուսաստանում կառուցված հանրակացարաններին, յիշեց Կիեվում, Պետերբուրգում և այլ մեծ քաղաքներում առևտրական ընկերութիւնների նախաձեռնութեամբ կառուցվող տները, նկատելով, որ ինչպէս այլ շատ անհրաժեշտ հիմնարկութիւններ, նոյնպէս և հանրակացարանների խնդիրը դեռ ևս գտնվում է սաղմային վիճակի մէջ Ռուսաստանում, այն ինչ Ֆրանսիայում համանման ընկերութիւնների թիւը հասնում է 75-ի, Գերմանիայում, 50-ի, որոնց մէջ գլխաւոր տեղը գրաւած ունեն կօօպերատիվ հիմունքների վրա գործող ընկերութիւնները։ Այդ կարգի ընկերութիւնների թիւը շատ է նաև Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ-Նահանգներում։

Ռուսաստանում գոյութիւն ունեցող ընկերութիւններից մէկը, Պետերբուրգինը ունեցել է 375,000 ր. դրամագլուխ, իսկ բնակարանները տրվում են 4—12 ր. ամսավարձով։

Անցնելով բնակարանների առողջապահութեան խնդրին, յարգելի դասախօսը նկատեց, որ թոքախտը տարածվում է գլխաւորապէս բնակարանների անառողջապահութեան շնորհիւ։ Առաջ բերելով դիտնական Լիտտի կարծիքը, ասաց, որ փոխանակ խիստ օրէնքներ հրատարակելու անառակութիւնն ու հարբեցողութիւնը վերացնելու համար, գերադասելի է հանրակացարանների թիւը աւելացնել և դարձնել նրանց առողջապահիկ և մատչելի գներով վարձու տալ աշխատաւոր տարրերին, որոնց մէջ գլխաւորապէս բուն են դնում առառակութիւնը, արբեցողութիւնն ու ոճրագործական ինստինկտները։

Օրինակ բերելով Անգլիան, նկատեց, որ հանրակացարանների բազմութեան և նրանց առողջապահիկ պայմանների շնորհիւ, զգալիօրէն նուազում են մահացութեան դէպքերը, իսկ աւելանում ծննդաբերութեան քանակը, որպիսի տներին կից հիմնվում են նաև մանկապարտէզներ։

Մատնանշելով խօսքը՝ Ա. Բաբեանն ասաց, որ այդ կարգի տներ կառուցելու խնդիրը Թիֆլիսում ևս ունի իր պատմութիւնը, ուր քաղաքային ինքնավարութեան մէջ այդ հարցը զարթեցրել է ձայնաւոր իշխան Միքէլաձէն, 1907 թ-ին, և ընդունվել է միաձայնութեամբ։ Դասախօսի ասելով, Թիֆլիսում բնակարանային գների աղութեան շնորհիւ տառապում են առնուազն 50,000 հոգի, որոնց համար կարելի է հանրակացարաններ կառուցել ամրաձայնութիւնում, օրինակ՝ Նախալօվկայում, Նաբիլուղում, Վերայում և այլն, որպիսի գործի նախաձեռնողը պիտի լինի քաղաքի ինքնավարութիւնը։

Պատկերը կատարեալ դարձնելու համար, դասախօսը հաղորդում է Թիֆլիսի տների հակառողջապահական դրութեան մասին սոսկալի տեղեկութիւններ։

Եզրափակելով իր ասածները, դասախօս Բաբեանը ասաց, որ շնորհիւ կապիտալիստական կարգերի, երբ քաղաքները լցվում են օրավարձով աշխատող ընչազուրկ բանւորներով, հարկ է նրանց համար էժան հանրակացարաններ կառուցել, հակառակ դէպքում մահացութեան, ոճրագործութեան, արբեցողութեան, անառակութեան և այդ կարգի այլ սոցիալական չարիքները օր ըստ օրէ ընդարձակ ծաւալ կը ստանան։ Յարեց նմանապէս, որ այս տեսակ որոշումներ են կայացվել Ռուսաստանում տեղի ունեցած մի կարգ համագումարներում։ Դասախօսութիւնը, ոչինչ ներկայ էին և քաղաքային ձայնաւորներից մի քանիսը և մի շարք հասարակական գործիչներ, տևեց մէկ ժամի չափ։

Հասարակութիւնը դասախօսին վարձատրեց բուռն ծափերով, որին յետոյ տեղի ունեցան վիճաբանութիւններ, որից մասնակցեցին ձայնաւոր Էլիավա, երգ.-հաւատարմատարի օգնական Ռ. Քաթանեանը, Սուրէն Սպանդարեանը, Սպիլիոտի և այլք, որոնք համարեա թէ բոլորն էլ քննադատեցին քաղաքային ինքնավարութեան դանդաղկոտութիւնն ու անգործունէութիւնը և ցանկութիւն յայտնեցին, որ նա նախաձեռնէ հանրակացարանների կառուցման գործին։

Յետոյ տեղի ունեցաւ հանրագային բաժին, մասնակցութեամբ օր. օր. Դոլուխանեանի և Սօլովեանի։ Յար. Դասպարեան

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱՀԱՏԻՑ

Պետերբուրգ, 5 Նոյեմբերի

Պետական Դումայն դեռ չը մոռացած այն խայտառակ միջադէպը, որ աջակողմեան պատգամաւոր Պուրիշկէվիչը իրան թոյլ տուաց Դումայի ինտելիգենտ մասի երեսով շպրտելու «СВОЛОЧЬ» բառը, այսօր նոյն Դումայի պատերի մէջ երևան է գալիս մի այլ անախորժ միջադէպ։

Եւ դա՝ շնորհիւ պրեմիէր Ստոլիպինի հետևեալ նամակի, որ ուղղված է Պետական Դումայի փոխ-նախագահ իշխ. Վոլկոնսկիին։

Ահա այդ նամակը.

«Ողորմած տէր իշխան Վլադիմիր Միխայլովիչ.

«Օրէնքի ոյժ ստացած և 1910 թ. մարտի 7 ին կայացած Թիֆլիսի դատաստանական պալատի դատավճռով՝ Թիֆլիս քաղաքի 10-դ մասի պրիստաւի նախկին օգնական Գվատուան դատապարտվել է ապօրէն վկայական տալուն համար այն մասին, թէ Նիկոլայ Զիսէիձէն բնակարանային ցենզ ունի Թիֆլիս քաղաքում՝ Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու համար։

«Միևնոյն դատավճռով հաստատված է, որ վերոյիշեալ Զիսէիձէն, այժմ Պետ. Դումայի անդամ, իբրև ոչ մի ցենզ չունեցող՝ անկանոն կերպով մտցվել է Թիֆլիսի գաւառի քաղաքային ընտրողների ցուցակի մէջ՝ մասնակցելու համար Պետ. Դումայի ընտրութիւններին և ապա անկանոն կերպով ընտրվել է ընտրող և Պետ. Դումայի անդամ։

«Յայտնելով՝ այդ մասին և ուղարկելով ձեզ յիշեալ դատավճռի պատճէնը՝ ձեր հայեցողութեան համար՝ պարտք եմ համարում կցել, որ սրա հետ միասին ես խընդրեցի Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքային տնօրինելու՝ հանել Նիկոլայ Զիսէիձէին ընտրողական ցուցակներից և ընտրողների թւից՝ իբրև մի անձ, որ ապօրինաբար մտցվել է այդ ցուցակների մէջ և ապօրինաբար եղել է ընտրող, և որ յիշեալ Զիսէիձէն եթէ չէ ենթարկվում քրէական պատասխանատուութեան՝ Պետ. Դումայի ընտրութիւններին ապօրինաբար մասնակցելուն համար, դա միայն այն պատճառով, որ վաղեմութեան ժամանակամիջոցն անցել է։

Տեղական թերթերում լուր տարածվեց, թէ Զիսէիձէն ընտրվել է իր եղբօր դօկումենտներով, որը վաղուց մեռել է։ Ուրեմն, սա Կարլ Զիսէիձէ է և ոչ Նիկոլայ Զիսէիձէ։

Այս լուրը կայծակի արագութեամբ մտաւ ամբողջ քաղաքում, նամանաւանդ Դումայի կուլուարներում։

Սպասում էին նոր բարդութիւնների։ասում էին, որ նրան արձակելու են Դումայից, դատի են ենթարկելու և շատ ուրիշ բաներ։

Բայց ահա եկաւ նիստի օրը և պարզվեց, որ Զիսէիձէն ոչ թէ մեռած եղբօր դօկումենտներով է ընտրվել (որը միանգամայն ռատ է), այլ՝ որ Թիֆլիսի 10-դ քաղաքամասի պրիստաւի օգնական Գվատուան իրը թէ սխալ վկայական է տուել դրան՝ որպէս ընտրողական ցենզ ունեցողի։

Ուրեմն, բանից դուրս է գալիս, որ Ն. Զիսէիձէն իսկապէս Ն. Զիսէիձէ է, միայն թէ ընտրողական ցենզ չունեցող։

Այս բանը եթէ իսկապէս այսպէս է, Դուման, յանձին իր պրեզիդիումի, չը պէտք է հրապարակ դնէր, մինչև որ ինքը չը համոզվեր դրանում։

Մենք գիտենք Դումայի պատմութեան մէջ Ուշակովի դէպքը, որը դատի ենթարկված լինելու պատճառով՝ չէր կարող Դումայի անդամ կ.չվել և որը պէտք է անմիջապէս հեռացվէր այնտեղից. սակայն նա նստեց իր տեղում, մինչև որ առաջին քաժանմունքի վերաստուգող յանձնաժողովը պարզեց խնդիրը։

Երևի այս նրա համար, որ նա ձախակողմեան լինելու փոխարէն՝ աջակողմեան էր...

Հարցը, ինչպէս գիտենք, անցաւ վերաստուգող յանձնաժողովի քննութեանը...

Թէ ինչ կը լինի վերջը, այդ էլ կը տեսնենք։

—

Այսպէս ուրեմն, թէ այս և թէ սրանց նման հարցերը եթէ կարողանում են երևան գալ, անպատճառ ժողովրդական լուսաւորութեան հարցը քննելու ժամանակն են երևան գալիս, որպէս մի նոր միջոց նրա ընթացքը խանգարելու համար։

Սա հէնց ամենաէականն է, որ թաղված է այս մի շարք զալմազների, խծբծանքների, հայհոյանքների և լպիրշ արտայայտութիւնների մէջ և որին մենք պէտք է հասկանանք։

Սակայն թող դրանք աշխատեն խանգարել պատմական անիւի ընթացքը, բայց թող չը մոռանան և՛ Բելտովի այն մեծ խօսքերը թէ՝ «Ով կը փորձէ պատմութեան անիւի ընթացքը փոխել, նա աւելի շուտ ինքը կընկնի դրա տակը և կը ջախջախվի»։

Այո, կը ջախջախվի։

Այդ էլ կը տեսնենք։ Մ. Ազեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Զուլֆա (Երևանի նահ.), 10 Նոյեմ.

Ահա մի քանի օր է, ինչ առտուրը մեզ է իր նօրմալ դրութեան մէջ։ Ապրանքների ներմուծումը Ռուսաստանից Պարսկաստան կատարվում է ոչ այնքան ուժեղ, իսկ, ընդհակառակը, Պարսկաստանից դէպի Ռուսաստան կատարվում է մեծ չափով։ Սեզօնի ապրանքները, որոնք գնում են Պարսկաստանից տրանզիտով Եւրոպա, արդէն վերջանալու վրա են, որովհետև շտապում են ապրանքները հասցնել տօն օրերին Եւրոպայում։ Ռուսաստան ներմուծվող ապրանքների քանակը մինչև առաջիկայ տարվայ գարնան վերջը ինչքան առաջ գնայ՝ այնքան կուժեղանայ և լայն ծաւալ կը ստանայ, եթէ Թաւրիզ-Զուլֆա ճանապարհը ռուսաց զօրքերով ապահովված լինի. թէ չէ՝ հակառակ դէպքում կարաւանները կանցնեն ուրիշ ճանապարհներով։

Չը նայած որ Զուլֆան բնիկ ժողովուրդ չունի, բայց այնուամենայնիւ ազգաբնակութեան թիւը բաւականին մեծ է, թաղկացած գլխաւորապէս առևտրական տարրերից։ Հրէաների թիւը այս տարի բաւականին մեծ է և առևտրի մէջ կատարում են խոշոր դեր, բայց հեգեմոնիան հայերի և Թաւրիզի կողմն է։

Ընդհանրապէս հասարակական կեանքը մեռած է և ամենը զբաղված են միմիայն առևտրով։ Ահա թէ ինչու ոչ ոք չէ մտածում մեզանում հասարակական առողջապահական պայմանները բարելաւելու մասին, մինչդեռ դա անհրաժեշտ է, մանաւանդ որ բնակարանները շատ քիչ կան, և այդ պատճառով էլ միատեղ ապրողների թիւը շատ է և հետևապէս շատ հեշտ կերպով կարող են ծնունդ առնել զանազան հիւանդութիւններ։

Ա. Տէր-Յարութիւնեան

—

Օղնա խ, 11 Նոյեմբերի

Գարեգին արքեպ. Սաթունեանի մահը խորին վիշտ պատճառեց մեզ։ Հանգուցեալին ճանաչում էինք որպէս բարի, խաղաղասէր և վարչական առաջնորդ։ Հանգուցեալի համար հոգեհանգիստ կատարվեց ս. Կարապետ մայր եկեղեցում։

Ամառը հաղորդել էինք, որ անյայտ չարագործները սպանեցին ս. Գէորգ եկեղեցու գործունեայ երեցփոխ Վարդան Տէր-Յակոբեանին։ Այժմ ոստիկանութիւնը կալանաւորեց երկուսին (մէկը հայ, միւսը վրացի), որոնք մեղադրվում են սպանութեան մէջ։ Քննութիւնը կը պարզի շատ հետաքրքրական ատառ ունեցող սպանութեան պատմութիւնը։ N. N.

—

Բեսթակ (ռուս-թիւրք. սահմ.), 3 Նոյեմ.

Հոկտեմբերի 10-ին խումբ մը թիւրքահայեր Թիֆլիսէն կը վերադառնան իրենց հայրենիքը՝ Բուլանըկ։ Եւ՝ որպէսզի աւելի ապահով անցնին սահմանը, վատահարար կը դիմեն Բեսթակի սահմանապահ մէմուրներու աջակցութիւնը խնդրելու, սակայն այս վերջինները նախկին ատելութեամբ և թշնամական ցոյցերով կը հրամայեն տեղական զինուորներուն՝ պաշարել խեղճ գիւղացիները և ենթարկել իսկոյն խուզարկութեան։ Թէ ինչ ապիկար միջոցներով է վերջացել այդ խուզարկութիւնը, այդ թող մի կողմ մնայ, մենք առաջ բերենք հետևեալ ուշագրաւ դէպքը։

Գիւղացիներէն ոմն Կարապետ Բրսէեան, որուն յանձնուած էր Բուլանըկի, Կոփի կեդրոնական գրադարանի համար տանելիօտ 100 օրինակ գիտական, առողջապահական, վիպական և այլ տեսակ ուսումնասիրական գրքեր, թիւրք սահմանապահ իշխանութիւններուն կըսէ, թէ ՁԱՍԱԿԱՐ ոչինչ ունի, և կը խնդրէ, որ թոյլ տայ իրեն՝ երթալու, բայց յանդիմանութեամբ կը մերժուի։ Պատճառն այն է եղած, որ գրքերը պահպանելու համար մնդուկին տակն և երեսը ծածկուած էր մի քանի կտոր «Մաթբալա» շաբաթաթերթով. այդ հանգամանքը տուիթ կը նկատուի, որ սահմանադրական կառավարութեան սահմանապահ պաշտօնեաները զանոնք ՁԱՍԱԿԱՐ անուանեն և իւրաքանչիւր համարի համար 40-ական ղրուշ (3 ք. 20 կ.) տուգանք առնելէ ի զատ՝ բոլոր գրքերն ևս գրաւեն. հոսակ յետոյ՝ իբրև պատիժ՝ հինգ օր ևս լեռնային բացօդեայ ցրտութեան տակ արգիլեն, տանջեն և, ի լրումն ամենայնի, վռնտելով հեռացնեն ճամբորդները։

Ափսոս սահմանադրական Թիւրքիային, որ «Մաթբալայի» ծաղրանկարներէն և շուն ու կատուէն երկնչելով՝ առիթ կը փնտռէ խեղճ ժողովրդին կողոպտելու։

Յարս. Մով.

—

Ղ ա ձ ա ր լ ու (Երև. գաւ.), 8 Նոյեմ.

Երևանի գաւառի հայկական գիւղերի մէջ իր նիւթական հարստութեամբ և մտաւոր զարգացմամբ Ղաձարլուն, կարելի է ասել, առաջին տեղն է բռնում՝ շնորհիւ բնակիչների աչքաբացութեան և քաղաքին մօտ լինելուն։ Երկաթուղով նա անմիջական յարաբերութեան մէջ է Ռուսաստանի բոլոր յայտնի քաղաքների հետ։ ունի պետական և ծխ. դպրոցներ և միաք կայ մօտ ապագայում բանալ և տղայոց պրոգիմնազիա։ Մխ. և պետական դպրոցները չեն կարող լրացնել ժողովրդի լայն շրջանում զգացված ուսման նպատակը, ուստի տասնեակ տղաներ ուղարկվում են Երևան՝ նահանգի մաւոր կենտրոնը։

Հասարակական հիմնարկութիւններից այստեղ աչքի է ընկնում ձրի գր.-ընթերցարանը։ Որովհետև նա հիմնվել է մօտ ժամանակներս, ուստի բնական է, որ դեռ չէ աչքի ընկնող թերութիւններից, ինչպէս օրբոլորովին բացակայում են մայրաքաղաքի ռուս թերթերը և լուրջ ամսագրերը։ Ստացվում են հետևեալ պարբերական հրատարակութիւնները. «Մշակ», «Հօրիզոն», «Սուրհանդակ», «Խաթաբալա», «Ժայռ», «Գաւառ», «Գիւղատնտես», «Тифл. Листокъ», «Баку» և «Искры»։

Գր. ընթերցարանը եթէ պահպանէ իր գոյութիւնը, այդ թերութիւնները իսպառ կը վերացվին։ Աղ. Եփրիկեան

ԽԱՐԿՕՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՐԷԿՏՕՐ ԲԱԳԱԼԷՅԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Խարկով, 4 Նոյեմբերի

Վերջերս Խարկովի Պատմական-Լեզուաբանական Ընկերութիւնը իր մի հասարակական բազմամարդ նիստում գեղեցիկ կերպով տօնեց Խարկովի համալսարանի այժմեան ռեկտոր Դ. Ի. Բագալէյի 30-ամեայ գիտական-մանկավարժական գործունէութիւնը։

Մեծարումը տեղի ունեցաւ համալսարանի հանդիսաւոր ընդարձակ դահլիճում, որտեղ հաւաքվել էին Խարկովի Պատմական-Լեզուաբանական Ընկերութեան բոլոր անդամները, համալսարանի պրոֆէսորները իրանց կանանցով, զանազան ներկայացուցիչներ հասարակական և կրթական հիմնարկութիւններից, ուսանողներ, կուրսիստկաներ և յուբելէարի ծանօթները։

Բագալէյը 30 տարի շարունակ աշխատել է ոչ թէ միայն իր մայրենի համալսարանի օգտին, այլ և իր ազատ ժամերը միշտ նուիրել է հասարակական և կրթական հիմնարկութիւնների ծաղկեցմանը բարձրացնելու համար, միշտ ակտիվ մասնակցութիւն ցոյց տալով նրանց ներքին գործերի մէջ։

Նա ծնվել է Կիեւում 1857 թ. մի աղքատ թամբագործի ընտանիքում։ Աւարտելով Կիեւի 2-րդ գիմնազիան ոսկէ մեդալով, նա մտնում է Ս. Վլադիմիրի համալսարանի պատմական-լեզուաբանական ճիւղը և այս վերջինս էլ աւարտում էլի ոսկէ մեդալով։ Շնորհիւ իր փայլուն ընդունակութիւնների՝ նրան թողնում են համալսարանում պրոֆէսորի կոչման պատրաստվելու նպատակով։ Մինչև 2½ տարին նա քննութիւն է տալիս և մագիստրոսի աստիճան ստանում, այնուհետև նա հրաւիրվում է Խարկովի համալսարանի պրիվատ-դոցենտի պաշտօնի ռուսաց պատմութիւնը դասաւանդելու համար։ Սակայն, երիտասարդ Բագալէյը տոգորված լինելով ազնիւ գաղափարներով և մեծ ընդունակութիւններով՝ շարունակում է տարէ-ցտարի բոլորի ուշադրութիւնը իր վրա դարձնել։ 1887 թ. նա ընտրվում է իսկական պրոֆէսոր Խարկովի համալսարանի և այդ օրից միշտ առաջնակարգ տեղ է բռնում համալսարանի պրոֆէսորների շրջանում։ Վերջապէս 1906 թ. նա ընտրվում է համալսարանի ռեկտոր և մինչև օրս էլ վարում է այդ մեծ և պատասխանատու պաշտօնը։

Պրոֆէսոր Բագալէյը ունի մի շարք աչքի ընկնող գիտական աշխատութիւններ. նա մանրազնին ուսումնասիրել է Հարաւային-Ռուսաստանի կեանքը և ժողովուրդների նիստ ու կացը։ Առանձին հետաքրքրութեամբ է նա արձագանք տալիս այն հարցերին, որոնց միշտ առաջ է բերում գիտական կեանքը։ Ինչպէս գիտութեան մեծ պաշար ունեցող մի անձնաւորութիւն, նա յայտնի է նաև ինչպէս հնագիր, հնախօս և պատմագիր։ Շնորհիւ իր պարզ, սահուն և գեղարուեստական մեկնութեան, նրա ազդեցիկ և պերճախօս լեկցիաները միշտ ուսանողների մեծ թիւ են գրաւում աուդիտորիայի մէջ։

Բազմաթիւ ուղերձների թւում աչքի է ընկնում մի ուղերձ, որ ներկայացրել էին պատմա-լեզուաբանական ֆակուլտէտի ուսանողները։

Բացի մեծ թւով ներկայացուցիչներից, որոնք եկել էին այդ օրը շնորհաւորելու յուբելէարին, ստացված էին մօտ 150 հեռագիրներ Ռուսաստանի զանազան ծայրերից և արտասահմանից։ Հեռագիրների թւում աչքի էր ընկնում միակ հեռագիրը Կովկասից, որ ուղարկել էին Թիֆլիսի կանանց բարձրագոյն կուրսերը։

Ուսանող բժ. Յովհ. Ս. Աղամեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Նոյեմբերի 17-ին Կովկասեան զինուորական-նահանգական դատարանում կը քննվի Թիֆլիսի 1-ին գիմնազիայի աշակերտ Շալվա Թավդգէրիձէի գործը, որ մեղադրվում է այս նոյեմբերի 2-ին միևնոյն գիմնազիայի դասատու Ս. Տրօիցկէին նախատածված կերպով սպանելու մէջ։

Մեղադրվողին ներկայացրված է մեղադրանք քրէական պատժագրքի 1451-դ յօդուածով, որով մեղադրվողին սպառնում է ժահապատիժ։

Գործը կը քննվի դռնփակ։

—

Սուաւրօպոլ, 10 Նոյեմբերի

Շաբաթ օրը, ամսիս 6-ին, տեղիս հաշտարար դատաւորի կամերայում նշանակված էր Օսմանովսկիի ծխատէր Ներսէս ք. Հեթեւեանի և տեղիս Սահակ քահ. Տէր-Յովհաննիսեանի գործի քննութիւնը։ Սը-բանսցից առաջինը մեղադրում է երկրորդին՝ իր մասին սուտ լուրեր տարածելու մէջ։ Մօտ 3 տարի է այս գործը նշանակվելով ու յետաձգվելով քաշքշվում է։ Վերջապէս ամսիս 6-ին ներկայացել են մեղադրող և մեղադրվող կողմերը իրանց վկաներով։

Տէր-Սահակի խնդրանօք դատաւորը յետաձգել է գործի քննութիւնը՝ նոր վկաների հարցաքննութեան ենթարկելու համար։

Հայր Հերթեւեանը տեղիս հայ. ուսումնաւոր ուսուցչի միջոցով առաջարկել էր տէր-Սահակին լրագրութեան միջոցով յայտարարել, որ իրան մոլորեցրել են, բայց նա մերժել է։ Բանդուսմանի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Լոյս նոյեմբերի 14-ի գիշերը Թիֆլիսում տեղաց յորդ անձրև, որ առաւօտեան դէմ փոխվեց ձիւնի։ Ձիւնը շարունակվեց հաստատ ամբողջ օրը և սպիտակ սաւանով ծածկեց քաղաքը և շրջակայքը։ Հեռագրաթելերի մի մասը ձիւնի ծանրութիւնից կոտրվեց, իսկ Աւճալեան փողոցում էլեքտրաքարը փոքր միջոց դադարեց երթևեկելուց հեղեղի պատճառով։ Ի դէպ է ասել, որ այն յատուկ մասնաժողովը, որին յանձնարարված էր միջոցներ մշակել Թիֆլիսի հեղեղների հասցրած վնասների առաջը առնելու համար, արդէն աւարտեց իր աշխատանքները։

◆ Քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեան հաստատվել է Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնում, հանձնելու դումայի ընտրութեան, մի տարի ժամանակով։

◆ 1911 թ. լցանում է Կովկասի Հայոց Բարեգ. Ընկերութեան գործութեան 30-ամեայ շրջանը։ Ընկերութեան խորհուրդը որոշել է հանդիսաւոր կերպով տօնել է Ընկերութեան 30-ամեակը նախապէս մշակված ծրագրով, որով պէտք է զբաղվի առանձին ժամնաժողովը։

◆ Զուբալովի անուան Ժողովրդական Տանը Թիֆլիսի քաղ. վարչութեան որոշմամբ կախեցին Կոմիսարժեվսկայայի, Գաբունիայի և իշխան Զէրքէզովի լուսանկարները։

◆ Ինչպէս երևում է Թիֆլիսի ոստիկանապետի հրատարակած վիճակագրական թերից, հոկտեմբեր ամսայ ընթացքում Թիֆլիսի մէջ տեղի են ունեցել ընդ ամենը 110 յանցագործութիւններ։

◆ «Հովիտ» թերթը իր վերջին համարում տպել է հետևեալ կարևոր լուրը. «Աժենահատատ աղբիւրից հաղորդում են, որ մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը թուղթ է գրել Վեհ. Կաթողիկոսին և յիշեցրել, որ թեմական խորհուրդներն և ընտրովի առաջնորդները հակաօրինական են»։ Եթէ ճիշդ է այս լուրը—որի մասին կասկածում ենք, որովհետև մինչև այժմ կառավարութիւնը ոչ մի առաջարկութիւն չարեց ընտրովի առաջնորդների դէմ և նոյն իսկ հաստատեց նրանց—պէտք է ասել, որ շատ ցաւալի կը լինի, եթէ ըստ առաջնոյն առաջնորդները նշանակվեն, որովհետև այդ դէպքում սխալմամբ կարող են նշանակվել եպիսկոպոսներ, որոնք իրանց պաշտօնը կատարել չը գիտեն և զուրկ են նաև վարչական որևէ ձիրքերից։ Սինոդի վրա պարտականութիւն կայ բացատրել կառավարութեան, որ առաջնորդների ընտրութիւնը ոչ մի բանով չէ հակասում Պլօժենիային։

◆ Նոյն թերթը հաղորդում է և մի այլ տարօրինակ լուր. որպէս թէ հանգուցեալ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանի մահից յետոյ ոչ մի կօպէկ դրամ չէ երևացել։ Այն անձինք, որոնք բացել են կնքված դռները և ցուցակագրել հանգուցեալի թղթերն ու գոյքը, պարտաւոր են բացատրել հասարակութեան, թէ որքան ճշմարիտ է այդ լուրը, քանի որ հասարակութեան մէջ յատուկ լուրեր են պտտում, թէ հանգուցեալը պէտք է գումար ունենար։

◆ Երէկ, կիրակի, նոյեմբերի 14-ին, Զուբալովի Ժողովրդական Տանը տեղի ունեցաւ հանդէս նուիրված հանգուցեալ Լէվ Տօլստոյի յիշատակին։ Կարդացվեցին նրա գրուածքներից հետաքրքրական կտորներ հայերէն լեզուով։

◆ «Русск. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ օսմանեան պարլամենտը որոշել է վերացնել անցագրերը։

◆ Թիֆլիսի հարկային առանձին յանձնաժողովը՝ նախագահութեամբ հարկային տեսուչ Ս. Մ. Յարութիւնեանի, որ կոչված է քաշելու քաղաքային անշարժ կայքերի վրա պետական հարկը,՝ վերջացրել է եկող 1911 թուի համար անշարժ կայքերի գնահատման աշխատութիւնները։ Թիֆլիս քաղաքի անշարժ կայքերը յանձնաժողովի կարծիքով արժեն շուրջ 112¼ միլիոն ռուբլի։ Այս գնահատութեան մէջ չեն մտնված այն կայքերը, որոնք օրէնքով ազատ են հարկից. գանձարանին, եկեղեցիների, գիտական-բարեգործական ընկերութիւնների պատկանող կալուածքները, որոնք եկամուտ չեն բերում՝ անմիջապէս վարձով տալուց։ Ինչպէս գիտեն մեր ընթերցողները, անշարժ կայքերի հարկատուութեան քաշիական ձևը վերջանում է 1911 թուին, տեղի տալով հարկին՝ ըստ զուտ արդիւնքի։

◆ Կովկասում ուղղափառութիւն տարածող ընկերութեան 1911 թ. բիւջէն կազմված է այսպէս. եկամուտ 129,842 ռ., իսկ ծախք՝ 130,072 ռ.։

◆ Կովկասի Փոխարքան փոխ-դեղապետ Բօբրովսկիին հաստատեց Թիֆլիսի գաւառապետի պաշտօնում։

◆ Թոյլատրված է Գարեգին Երիցեանցին հրատարակել Թիֆլիսում մի ռուսերէն օրաթերթ «Էխо» (Արձագանք) անունով։

◆ Թիֆլիսի Հայ Դրամատիրական Ընկերութեան այս տարվայ հրաւիրած դերասանական խմբից դուրս է եկել դերասան Արաքսեանը։

◆ Յուխումի և Գուդաուտի միջև հաստատվել է աւտոմոբիլների հաղորդակցութիւն։

◆ Պետերբուրգում մայիս ամսին կը կայանայ ռուս օդագնացների հատուկ համագումարը։

◆ Պետերբուրգից մեզ գրում են, որ այս օրերս այնտեղ լոյս է տեսել գօկտոր Վ. Խաչատրեանցի կազմած մի գրքոյկը հայերէն լեզուով՝ «Սիֆիլիս և Հաթա-Էլիխան 606-ը» վերնագրով։

◆ Կիրակի, նոյեմբերի 21-ին, Զուբալովի անուան Ժողովրդական Տանը Մ. Ա. Զարարը կը կարդայ մի դասախօսութիւն՝ «Քաղաքների սոցիալական խնդիրները» թեմայով։ Սկիզբն է ցերեկվայ 1 ժամին։ Մուտքի գներն են՝ 5—50 կոպէկ։

◆ Այսօր, երեքշաբթի, ամսիս 16-ին, Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկերութեան խորհուրդը նշանակել է խառն նիստ Թիֆլիսի քահանաների հետ, որոնք ցանկութիւն են յայտնել նպաստել Ընկերութեան նիւթական միջոցներին նուէրներ ժողովելով և անդամների թիւը շատացնելով։ Նոյն նիստում պէտք է խորհրդակցութիւն կատարվի Թիֆլիսում հիմնելու ազգատաճնամ հոգաբարձութիւններ։

◆ Կ. Հ. Բ. Ընկերութեան խորհուրդը, ի նպատի առնելով բազմաթիւ աշակերտների դիմումները, որ նրանց Ընկերութեան գրադարանից գրքեր տրվեն առանց գրաւականի, հաղորդեց դպրոցների հոգաբարձուներին, որ եթէ նրանք երաշխաւորեն իրանց աշակերտների համար, խորհուրդը կարող է տալ առանց գրաւականի գրքեր։ Մինչև օրս Թիֆլիսի դպրոցների հոգաբարձութիւններից պատասխանել են և իրանց համաձայնութիւնը տուել միմիայն Գայանեան և Մարիամեան-Յովանեան դպրոցների հոգաբարձութիւնները։

◆ Որոնվում է հոկտեմբերի 27-ից անյայտացած Ալէքսէյ Գավր. Գիւլիւզով, որ ապրում է Սուրբ-Մինասկայա փողոցում։

◆ Մեզ խնդրում են բարեհաճ անձանց ուշադրութիւնը հրաւիրել երկու քոլորովին որբ օրիորդների վրա, որոնցից մէկը՝ Վարսենիկ անունով, 14 տարեկան է, իսկ միւսը՝ Վարդանուշը 12 տարեկան։ Ցիշեալ որբերը այժմ ապրում են մի ընտանիքում, որը հաղիւ է կարողանում կերակրվել։ Օրիորդների վիճակին ցաւակից անձինք կարող են դիմել հետևեալ հասցէով՝ Օկօէվսկի փող. № 17։

◆ Ինչպէս լսում ենք, Զուբալովեան Ժողովրդական Տան հայկական սեկցիան բեմիսեօրի պաշտօնով հրաւիրելու է դերասան Արմէնեանին։

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Հայ չքաւոր երեխանց օգնող «Լոյս» ընկերութեան վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը այրի Սոֆիա Գրիգորեանցին, որը ընկերութեանը նուիրեց 50 ռ. ի յիշատակ իր ամուսնի՝ վաղեմի ուսուցիչ հանգուցեալ Զաք. Գրիգորեանցի»։

◆ Վրիպակ.—«Մշակի» № 254-ում «Պետական Դումայի» մէջ, փոխանակ «չեմ կարող լռել» դարձուածքի, տպվել է «լսել»։

ԼՈՒՐԵՐ ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ

◆ Շաբաթ, նոյեմբերի 13-ին, յօդուտ Վրաց Մէջ Գիտութիւն Տարածող Ընկերութեան Հաւլաբարի գր.-ընթերցարանի, Վրաց ազնուականների թատրոնում դերասանական խումբը խաղաց Հայէրմանսի 4 գործ. «Յուսոյ խորտակումը» դրաման և «Պատանի աղորժակը» վոդէվիլը։ Հետևեալ օրը նոյն խումբը ներկայացրեց Ա. Դումայի 4 գործ. «Էդմոնդ Ռին» դրաման, մասնակցութեամբ յայտնի դերասան Վլ. Ալէքսէեվ-Մէսխիշվիլիի։

◆ Կիրակի, ամսիս 14-ին, վրաց աղնուականութեան դէպուտատների ժողովարանում կայացաւ Վրաստանի Պատմա-Ազգագրական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, ուր մի դասախօսութիւն կարդաց Թաղայլշվիլին, որից յետոյ տեղի ունեցան ընտրութիւններ։

◆ Ֆրանսիայում վախճանված յայտնի էմիգրանտ Դէօրգի Դէկանօզաշվիլիի մահվան առիթով՝ վրաց «Սախալխо Գազէթի» լրագրի խմբագրութիւնը ձիւթուրայից ստացել է մի խումբ հասակակիցներից ցաւակցական մի հեռագիր, որը ի միջի այլոց յայտնում է, որ կատարվել է այնտեղ հոգեհանգիստ։

◆ Կիրակի, ամսիս 14-ին, Զուբալովի անուան Ժողովրդական Տանը վրաց սիրողների խումբը, մասնակցութեամբ դերասանուհի Զիրգաձէի և դերասան Գամզրէլիձէի, ներկայացրեց 3 գործ. «Մեղաւոր է» դրաման և մի վոդէվիլ։

◆ Վրացի երիտասարդ գրող Դէօրգի Փոսխովէլին՝ թոյլատրելու համար ներկայացրել է Կովկասի Փոխարքային իր գրած նոր պիէսը՝ «Կեանքի որոգայթ» վերնագրով, 4 գործողութեամբ։

◆ Նոյեմբերի 11-ին կայացաւ ժողովրդական համալսարանի վրաց սէկցիայի հերթական նիստը, Կովկասեան Թիւղատնտեսական Ընկերութեան շինութեան մէջ։

ի նկատի ունենալով, որ մօտ ապագայում սեղի կունենայ այդ սկզբի ընդհանուր ժողովը, որը կընտրի վարչութեան անդամներ, ժողովը որոշեց անդամութեան համար այնպիսի անձանց առաջարկել, որոնք հոգով նուիրվին յօգուտ ժողովրդական համալսարանի գործունէութեան։ Ժողովը ընտրեց իր միջից մի մարմին, որը համաձայնութիւն պէտք է վերցնի համապատասխան անձերից, վարչութեան անդամութեան համար։

◆ Վրաց «Սախալիս Գազէթի» լրագրին հաղորդում են, որ Գօրու գաւառի Տէվէտի գիւղում վախճանվել է 101-ամեայ մի ծերկին, ազգով վրացուհի, որը ունեցել է 12 զաւակներ և բազմաթիւ թոռներ, իսկ մինչև մահը եղել է կատարելապէս առողջ։

◆ Այսօր, ամսոյս 16-ին, վրաց թատրոնում տեղի կունենայ հերթական գրական երեկոյթներից մէկը, նախաձեռնութեամբ Վրաց Դրամատիկական Ընկ. վարչութեան անդամ բժ. Շալվա Միքելաձէի։ Նմանապէս խաղացվելու է մի վոդեվիլ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ՈՒՐ

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դերասան Վրոյը Բօրսայի դահլիճում շաբթէ-շաբաթ կազմակերպելով ներկայացումներ, ասես, աշխատում է տալ իր ամպլուային յատուկ պիէսներ։

Եւ շատ էլ լաւ է անում մեր կարծիքով։ Նախ այն պատճառով, որ առհասարակ ցանկալի է, որպէսզի իւրաքանչիւր դերասան իր շրջանակից դուրս չը գայ և իր խաղի հակառակ դերեր չը ստանձնէ բարդ պիէսներում, որպէսի երևոյթը դժբաղդաբար գոյութիւն ունի մեզանում, և երկրորդ նրա համար, որ Վրոյը կենտրոնական դերերի իր աջող կատարումով կարողանում է մեղմացնել անհաճոյ տպաւորութիւնը այն սիրողների, որոնց հետ այսօր գործում է նա և որոնք յաճախ բեմ են ելնում դերերը չը սերտած...

Շռայլութիւն էր, յիրաւի, մի գիշերում՝ նոյեմբերի 14-ին, տեսնել անմահ Պարոնեանի «Բաղդասար աղբար» և «Մեծապատիւ մուրացկաններ» կոմէդիաները, որոնց կենսունակ իւմօրը և առողջամիտ սատիրը դեռ հանդիսականի ուշադրութիւնն են բևեռում, յարուցելով նրա մէջ առողջ ծիծաղ։

Աւելորդ կը լինի կրկնել, եթէ շեշտենք Վրոյրի տաղանդաւոր խաղը Բաղդասար աղբօր և Աբիսողոմի-աղայի դերերում։ Գեղեցիկ տպաւորութեան նպաստեց մի ուրիշ շնորհալի դերասանի՝ Յ. Ստեփանեանի անկնկալ բեմ ելնելը, որ յանպատրաստից լաւագոյն Օգէն-էֆէնդի դարձաւ այդ օրը բեմի վրա։

Մեր ուշադրութիւնը հէնց սկզբից կանգ առաւ նաև Լաքայի վրա, որի հանդէպ գալը մենք առաջին անգամ ենք տեսնում։ Լաքան Թողնում է ընդունակ դերասանի տպաւորութիւն. նա Մելքոնի և Մանուկ-աղայի դերերը տարաբնոյթ միանգամայն նրբութեամբ և հարազատ գծերով, նպաստելով այդ դերերի բովանդակ արտայայտութեանը իր թիւրքահայ բարբառով։

Տիկին Վրոյր, Բայանդուրեան և մի քանիսը բաւարար կերպով նպաստեցին անսամբլին։ Մի քանի դերակատար-սիրողներ ինչպէս մենք վերևում յիշատակեցինք, այդ օրը նոյնպէս չէին սովորել իրանց դերերը ինչպէս հարկաւոր է։

Ներկայացումը, բնականաբար, վերջացան գիշերվայ ժամը 1-ի մօտերը։ Ե.

—

Դեբրէնտ, 8 նոյեմբերի

Ամսոյս 6-ին, երեկոյեան ժամը 6-ին, տեղիս՝ Նիկոլայ Բ. Կայսրի անուան ռեալական դպրոցում տեղի ունեցաւ աշակերտական գրական երեկոյթ, նուիրված՝ ռուս գրող Անտոն Չէխովի ծննդեան 50-ամեակին, որը լրացաւ ներկայ 1910 թ.։

Հանդիսի նիւթը վերցված էր ամբողջովին Ա. Չէխովի գրուածքներից, որոնք իրանց շնորհալիութեամբ և իւմօրով հանդիսականներին հոգեկան մեծ բաւականութիւն պատճառեցին։ Մերթ ընդ մերթ երգում էր աշակերտական երգեցիկ քառաձայն խումբը և նուագում՝ աշակերտական նուագախումբը։

Երեկոյթին ներկայ էին նաև տեղիս օրիորդաց գիմնազիայի բարձր դասատան աշակերտուհիները, երկու դպրոցների ուսուցչական խմբերը իրանց ընտանիքներով և կողմնակի անձինք։ Հանդիսից յետոյ տեղի ունեցան պարեր, որոնք տևեցին մինչև 10½ ժամը։ Երեկոյթը անցաւ շատ լաւ շնորհիւ կազմակերպող մի քանի երիտասարդ դասատուների, որոնք և հրապարակական շնորհակալութեան արժանացան դպրոցի վերատեսչի կողմից։

Ռուբէն Տէր-Գրիգորեան

—

Զարջոյ (Անդրկ. երկ.), 8 նոյեմբերի

Ամսոյս 6-ին Զարջոյի ժողովրդական ակմբանոցում մի հաւերգ տուեց շուշեցի Ջութակահար Զարմայր Աթայեանը, որ այս տարի է աւարտել Պետերբուրգի կոնսերվատորիան։

Նա նուագեց Մօցարտից, Շոպէնից և Զայկովսկիից կտորներ, որոնք շատ լաւ տպաւորութիւն թողեցին ունկնդիրների վրա։ Երիտասարդ ջութակահարը ունի լաւ տեխնիկա, ժամանակ է գնալ արտասահմանում շարունակելու, եթէ միայն զինուորական կոչումի հարցը նրա այդ դիտաւորութիւնը չը խանգարէ։

Ակմբանոցի դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր հասարակութիւնով. այդտեղ կար բոլոր ազգերից ժողովուրդ, տեղական ադմինիստրացիայի ներկայացուցիչը, բաւականաչափ պարսիկ ու սարթ։ Ժարդիկ։ Վերջիններս և հայերի մեծ մասը չը-բռնելով գեղարուեստի միաքն ու էութիւնը՝ ջութակի մելամաղձոտ եղանակների տակ, բերանաբաց նիրհում էին։ Բայց երբ արտիստը նուագեց «Կռունկը», «Ձայն տուր, ով ծովակը» և մի պարսկական բալաթի, այդ նիրհողները սթափվեցին և մեծ շնորհակալութիւն յայտնեցին։ Ծափերի տարափի տակ ջութակահարը վերջացրեց երկու բաժանմունքից բաղկացած իր կօնցերտը։

Հայ երիտասարդները ջութակահարին պատուեցին ընթրիքով։

Կօնցերտի աջողութեանը մեծապէս նըպաստեցին զանձակեցի շտաբս-կապիտան Աթայեանը, հայոց դպրոցի հոգաբարձուներ Ա. Յակոբեանը և Ա. Արզումանեանը, որոնք սիրով յանձն էին առել տոմսակները ցըրելու։

Մուտք եղել է մօտաւորապէս 200 ը., որի կէսը հայոց դպրոցի օգտին է։

Նորեկ

—

Ասխաբադ, 1 նոյեմբերի

Հոկտեմբերի 28-ին, տեղիս հասարակական ժողովարանի դահլիճում Հայ Դրամատիկ խումբը ներկայացրեց Ահարոնեանի «Ուխտվածները» դրաման և «Օրհասական դէպքում» վոդեվիլը։

Դրաման սահուն չանցաւ, բայց վոդեվիլը դա հակառակ, խաղացվեց կենդանի և կրքով չափ ցրեց այն վատ տրամադրութիւնը, որ պաշարել էր ամենքին առաջին պիէսայի ժամանակ։ Գ. Հ.

—

Բաշտ, 8 նոյեմբերի

Հոկտ. 31-ին, երեկոյեան ժամը 8-ին, տեղիս թատերասիրաց ընկերութեան ձեռնարկութեամբ հայկական թատրոնում խաղացին Ալ. Արէլեանի «Մարվող ճրագներ» պիէսը։

Խաղը ընդհանրապէս անցաւ սահուն։ Հանդիսականները գոհ սրտով հեռացան թատերասրահից։ Զէզոք

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Էնզելի, 8 նոյեմբերի

Անբնական կերպով առաջացած Պարսկաստանի յեղափոխութիւնը և վարձկանների միջոցով առաջնորդված ազատագրական գործը քանի գնաց՝ այնքան անհետևողական դարձաւ, կորցնելով իր կոչման բարձրութիւնը։

Սահմանադրական կարգերի միանգամայն տհաստութիւնը Պարսկաստանում՝ տեղիք տուեց գործի դէպի անկում առաջանալուն, որով, որպէս շատ անգամ ենք կրկնել, երկիրը օրէ-ցօր անցաւ դէպի պատահական մարդկանց ձեռքը և նրանք էլ, անգիտակ լինելով, այսօրվան անարխիային հացրին։

Որպէս ամենքին էլ լաւ յայտնի է, մեզ մօտ մինիստրական փոփոխութիւնները այս վերջին տարիներս աւելի յաճախ էին կըրկնվում, քան թէ նրանց գործից էր մի բան իմացվում։

Մի խումբ ժարդիկ երկրի տէր ու տնօրէն լինելով, ամեն օր մինիստրներ էին փոխում միմիայն այն պատճառով, որ փոփոխվողները չէին պարում իրանց ցանկութեան համաձայն։

Սադրազամի պարկի դէպքը եկաւ լրացրեց հնացեալ պակասը և ժողովրդին միանգամայն հիասթափեցրեց սահմանադրութիւնից, սահմանադրութիւն, որ իր սկզբնական օրերում «ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն» էր քարոզում։

Ինչով տարբերել հին կարգերի և նորերի գործելակերպի գանազանութիւնը։ Հին մէջլիսը ռմբակոծվեց որպէս ըմբոստների վայր, նորն էլ պարկը ռմբակոծեց դարձեալ որպէս ըմբոստների վայր։

Գլխաւորապէս՝ պէտք աշխատել երկրի հասարակական ձևը փոխել. պաշտօնեաների փոփոխութիւնը երկրորդական նշանակութիւն ունի։ Մենք ցանկացանք բարելաւված Պարսկաստան տեսնել և ոչ թէ նոր ձևի հագնված չինովնիկ-պաշտօնեաներ, նախկինից աւելի աններողամիտ, աւելի անխիղճ, արիւնարբու։

Մենք ունքը շիտելու տեղ՝ աչքն էլ հանեցինք և դրութիւնը հասցրինք այսօրվան։

Ամէր Բահաթուր-Զէնգին հեռացրինք մինիստրութիւնից որպէս ժողովրդի թշնամի, իսկ նրա տեղը բերինք Էյն-ուդ-Դովլէին որպէս ժողովրդի բարեկամ։ Եւ մթթէ սա պատժական ծաղր չէ ժողովրդի իրաւունքն ոտնահարելու։ Մթթէ աւելի լաւ չէր նախկինը, քանի այսքան զոհողութիւն և արիւն չէր թափված։

Իսկապէս որ հրաշքների երկիր է Պարսկաստանը, այլապէս՝ այս մի քանի տարում այսքան փոփոխութեան ականատես չէինք լինի և միշտ էլ ապարդիւն։

Պարսկաստանի այս նոր կեանքում տեղի են ունեցել և ունենում են դէպքեր, մանրամասնութիւններ, որոնք չեմ կարծում թէ մի այլ երկրում պատահեն և հետևապէս զրանց մամուլին տալը նոյն իսկ հնարաւորութիւնից դուրս է։

Որպէս շատ անգամ ենք կրկնել, մենք դարձեալ կանգնած ենք մեծ դէպքերի նախօրեակին։ Մուշահիդ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդ մընում են 14 հոգի։

Իրկուտսկի գենե-նահանգապետին փոխադրվեց 10,000 ը. Անդրբայկալեան երկրում հակաժանտախտային միջոցներ ձեռք առնելու համար։

ՕՐԵՆԲՈՒՐԳ։ Տրօյցկում գողացված ապրանքը որոնելու ժամանակ սպանվեցին երեք քաղաքապահ ոստիկաններ։

ԻՎԱՆՕՎՕ ՎՕԶՆԷՍԷՆՍԿ։ Այրվեց Անդրժէնվսկիի ցիրկը։ Զոհվեցին մի երեխայ և ամբողջ ինվենտարը, բացի ձիերից։

ԲՈՒԽԱՐԵՍՏ։ Թիւրքայից եկողները ենթարկվում են բժշկական քննութեան։

ՐՈՒԱՆ։ Գործադուլին չը յարված բանւորների պարագլխին սպանելուն համար երդուեալ դատաւորները դատապարտեցին մէկին մահվան պատժի, երեքին՝ տաժանակիր աշխատանքների, 15 հոգու՝ 8 տարով բանտարկութեան։

14 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաքաճառների և հրատարակիչների համառուսական ընկերութեան խորհրդի նախագահ ընտրվեց Լեվակէն։ Ընկերութիւնը ունի մօտ 400 անդամ։

Խօլերայով հիւանդ մնում են 11 հոգի։

ԿԻԵՎ։ Գերմանական Բաումանն և Շլօսֆիրմայից ռուսաց գանձարանին ներկայացրած 1½ միլիոն մարկ պահանջի առիթով՝ հարաւ-արևմտեան երկաթուղագծերի համար քարածուխ մատակարարելու պայմանագիրը խախտելու համար, այստեղ հաղորդում են, որ այդ ֆիրման երբէք քարածուխ չէ մատակարարել։ Ներկայացրված պահանջը անհասկանալի է։

ԿԵՐՉ։ Երկրորդ օրն է անասելի փոթորիկ է. մի քանի նաւեր դուրս չեկան։ Գեատփի և մօտակայ փողոցները ծածկված են ջրով։ Ենիկալում պօստը քանդվեց. ազգաբնակութիւնը լուրջ վտանգի մէջ է։

ԱՕՏՐԱԽԱՆ։ Ծովի վրա ուժեղ փոթորիկ է։ Բիրիւչի կօսա արուարձանում ջրի տակն են մնացել 50 տներ։ Օգնութեան համար նահանգապետը ուղարկեց արքունի շրջենաւեր։

ԿԻԵՎ։ Կայսերական Թատրոնական Ընկերութեան կօմիտէը որոշեց Տօլստոյի յիշատակին հիմնել սանատորիա բեմական հիւանդ գործիչների համար։

ՁԵՐԿԱՍԻ։ Դատարանին յանձնվեցին որբերի դատարանի նախագահ Կուլուշը և գրագիր Սօլէյնսկին կեղծ հրամաններ կազմելու համար։

ՍՕՖԻԱ։ Հանդիսաւոր կերպով բացվեց ռուսական հրատարակչական ընկերութիւնը։

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ։ Երէկ և այսօր տօնվեց ուսանողական միութեան նոր տան բացումը։ Ճաշին խօսեց Մեխելինը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԻՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ արագ № 2 գնացքը՝ 0 ժ. 28 ր. առաւ., Գանձակ է հասնում 2 ժ. 38 ր. ցերեկ., Նէյմխ՝ 4 ժ. 18 ր. ցերեկ., Հաջի-Կարուլ՝ 8 ժ. 12 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 59 ր. գիշ., Բագու՝ 11 ժ. 26 ր. գիշ.։ Մարդատար № 6 գնացքը՝ 3 ժ. 35 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 56 ր. երեկ., Նէյմխ՝ 12 ժ. 7 ր գիշերվայ, Հաջի-Կարուլ՝ 4 ժ. 49 ր. գիշ., Բալաջարի 8 ժ. 13 ր. առաւօտ., Բագու՝ 9 ժ. 7 ր. առաւ.։ Պօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 25 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 47 ր. գիշ., Նէյմխ՝ 7 ժ. 3 ր. առաւ., Հաջի-Կարուլ՝ 12 ժ. 11 ր. ցերեկ., Բալաջարի՝ 3 ժ. 53 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 21 ր. երեկ.։ Խառն գնացքը՝ IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան՝ 4 ժ. 18 ր. գիշ., Գանձակ է հասնում 12 ժ. 48 ր. ցերեկ., Նէյմխ՝ 4 ժ. ցերեկ. Հաջի-Կարուլ՝ 11 ժ. 39 ր. գիշ., Բալաջարի՝ 4 ժ. 31 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 22 ր. առաւօտեան։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար ⁷⁴/₇₅ 12 ժ. 41 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ է հասնում 11 ժ. 41 ր. առ., Էջմիածին կայար՝ 5 ժ. 18 ր. ցերեկ., Երևան (առանձին գնացք Ուլուխանլուից յատկացրեցված այս գնացքին)՝ 7 ժ. 11 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 21 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 5 ր. գիշ.։ Մարդատար-ապրանքատար № ⁷⁸/₇₉ գնացքը՝ 4 ժ. 33 ր. ցերեկ., Ալէքսանդրօպոլ է հասնում 3 ժ. 31 ր. գիշ., Էջմիածին կայար. 9 ժ. 3 ր. առաւօտեան, Երևան՝ 10 ժ. 34 ր. առ., և սրանից դէպը այլևս չէ գնում։ Խառն գնացք IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան № ¹⁰⁸/₁₀₉՝ 5 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ է հասնում 7 ժ. 20 ր. երեկ., Էջմիածին կայարան՝ 1 ժ. 30 ր. գիշ., առանց Երևան մտնելու, Նախիջևան՝ 9 ժ. 49 ր. առաւ., Ջուլֆա՝ 11 ժ. 58 ր. ցերեկ.։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5 գնացքը՝ 8 ժ. 10 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 12 ժ. 18 ր. ցեր., Բաթում՝ 9 ժ. 20 ր. երեկ.։ Պօստատար № 3 գնացքը՝ 2 ժ. 9 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 6 ժ. 18 ր. երեկ., Բաթում՝ 4 ժ. 28 ր. գիշ.։ Մարդատար № 7 գնացքը՝ 11 ժ. 53 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 53 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 26 ր. ցեր.։ Խառն գնացք № 107 ըստ հարկի կարևորութեան՝ 1 ժ. 5 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 6 ժ. 54 ր. առաւ., Բաթում՝ 8 ժ. 33 ր. երեկ.։

ԲՈՐՃՕՄ՝ մարդատար № ⁹/₆₆ գնացքը՝ 3 ժ. 28 ր. ցեր., Բօրժոմ է հասնում 6 ժ. 8 ր. երեկ., Միխայլօվօ՝ 7 ժ. 43 ր. երեկ., Բօրժոմ՝ 9 ժ. 8 ր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒՄԻՑ՝ մարդատար № 5 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւօտեան։ Պօստատար № 3՝ 1 ժ. 9 ր. ցեր.։ Մարդ № 1 գնացքը՝ 10 ժ. 55 ր. գիշ., որ այլևս դէպը չէ գնում։ Խառն գնացքը IV կարգի վագոններով 12 ժ. 3 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6 գնացքը՝ 2 ժ. 46 ր. ցերեկ.։ Պօստատար № 4 գնացքը՝ 9 ժ. 25 ր. գիշ.։ Մարդատար № 8 գնացքը՝ 8 ժ. 45 ր. առաւ., որ դէպը այլևս չէ գնում։ Խառն գնացքը IV կարգի վագոններով 3 ժ. 16 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № ⁷²/₇₃ գնացքը՝ 6 ժ. 36 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար՝ № ⁸⁰/₈₁ գնացքը՝ 7 ժ. 1 ր. առաւ.։ Խառն գնացքը IV կարգի վագոններով՝ 10 ժ. երեկ.։

ԲՈՐՃՕՄԻՑ՝ մարդատար № ⁶¹/₁₀ գնացքը՝ 7 ժ. 35 ր. առաւօտ.։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Արագ գնացքները (№ 2՝ Թիֆլիս-Բագու և № 1՝ Բագու-Թիֆլիս) առանց փոփոխելու գնում են մինչև Բօստով և յետ դառնում, անպատճառ մտնելով Բագու՝ ամբողջ կազմով և բոլոր տեղերը պլաց-կարտով են։ Այս գնացքներում կայ Միջազգային Ընկերութեան մի միքօստ 1/11 կարգի վագոն, որ առանց լիցքնելու հաղորդակցում է Թիֆլիս-Բագու-Մոսկվա՝ ուեյդված վագոնով (1000 վերստոց 1 կարգի վագոնում 8 ր., 11 կարգի՝ 6 ր.)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և մրսածութ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ. ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՅԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկ սհատ.։
Վճարը 50 կ.։ Զբաղուողները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—122

ԲԺԻՇԿ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր { Առաւօտ. ժ. 9—12, Երեկոյ. ժ. 5—7
(Ե.Հ.Կ.) 1254. 100—5

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից՝ Պարիզում։
Ընդունելութիւն { առաւ. ժ. 9—11. երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39.
(ա. օ.) 1179. 100—25

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, քթի, բկի, կոկորդի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը { Առաւօտեան 9—1 ժամը. Երեկոյեան 5—7 ժամը.
Վելիամինովսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—8

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔԻՍ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆոն № 388.
(Ե.Հ.Կ.) 909. 100—44

ՖԱԲՐԻԿԱՏՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱԳԵՆՏ
Յ. Գ. ԽԱԼԱԹԵԱՆ
ՐԷԿԼԱՄԵՐ ԵՒ ՑԱՑՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ընդունում եմ տեսակն և օտար քաղաքների լրագիրների և ամսագիրների համար՝ ամենաձեռնտու պայմաններով, ՎՃԱՐԸ ՄԱՍ-ՄԱՍ։ Ընդունում եմ նոյնպէս կոմիսիոնական ամեն տեսակ պատուէրներ։ Ունեմ երկար տարիների փորձառութիւն։
Խնդրում եմ չը շփոթել ինձ միւս ագենտների հետ։
Հասցէն՝ Красногорская, 30. ТЕЛЕФОНЪ № 1041.
Պատուէրները կատարում եմ ճշգրիտ կերպով։
Անձամբ կազմում եմ ամեն տեսակ ռեկլամներ։
(օ. մ.) 1139. 25—21

ԿԱՐՈՒՋԵԻԻ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՋԵՐՈՎՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Միակը Ռուսաստանում։ Կուրսերի ծրագիրը և ձեռնարկները ուղարկվում են ձրի։
С.-Петербургъ, Невскій пр., 67. Правленіе О-ва Закройщиковъ.
(ս.ե.) (П 12073) 1163. 4—2

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆԻ
ԲԱՄԲԱԿԸ
ԵՒ
ՆՐԱ ՄԾԱԿՈՒԹԻՒՆԸ
Գործնական եւ լրիւ ձեռնարկ բամբակագործութեամբ պարապողների համար։
20 նկարներով
Գինն է 40 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ“, կամ «Գուտենբերգ», «Գիր», «Կենտրոնական» գրաչաճառանոցներին և Բագու „Сотрудникъ“-ին։
(ե. կ.) 1233. 10—6

Տրուբի ամեն օր, և ուրիշ, հեշտութեամբ կարող են վառուել տարամրդիկ և կանայք՝ ընդունելով պատուէրները շատ սպասող մի առարկայի համար։ Դրամագլուխ և գիտութիւն չէ պահանջվում։ Պայմանները, հաւատարմագրութիւն և ամրողջ նիւթեղէնները կուղարկվեն՝ հէնց որ կը ստացվի 21 կոպ. մարկաներով՝ ճանապարհածախքի համար։ Հասցէն՝
О-ву „СЕМИ-ЭМАЛЬ“ г. Лодзь, № 52.
(3,6,10,13,16) (В 80120) 1207. 5—5

ԲԱՑՎԱԾ Է 1911 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
XXIX ՏԱՐԻ ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱՋ XXII ՏԱՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ
Տարեկան բաժանորդները ստանում են.
I. ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը «Մանկական Աշխարհ» յաւելուածով։
II. ՏԱՐԱՋ պատկերազարդ հանդէսը «Թատրոն և Երաժշտ.» յաւելուածով։
III. ԱՌՈՂՋԱՊԱՀ պատկերազարդ ամսաթերթը «Հոգու և Մարքի առողջութիւնը» յաւելուածով։
IV. ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ III և IV պրակներ։
V. ԳԵՂԱՓՆՋԻԿ ՕՐԱՑՈՑՑ 1912 թ.։
VI. ԱՐՕՋԱ, Fantaisie իրականութիւնից։
VII. ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ, շքեղ նկար ապակեայ պատրաստ շրջանակով, յարմարեցված թէ սեղանի վրա դնելու և թէ պատից կախելու։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ԱՂԲԻՒՐ տարեկան 3 ր., (Արտասահման 5 ր.) Դպրոց. աշակ. հասցէով 1 ր.
ԱՌՈՂՋԱՊԱՀ » 2 ր. (Արտասահման 3 ր.) » » » 1—50 կ.
ԱՂԲԻՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀ 5 ր. (Արտասահման 7 ր.) » » » 2 ր. —
ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ, ՏԱՐԱՋ, ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ ԳԵՂԱՓՆՋԻԿ ՕՐԱՑՈՑՑ ԱՐՕՋԱ, ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ Բոլոր յաւելուածներով և պրեմիաներով՝ 10 ր. արտասահմանում՝ 18 ր. կամ 50 ֆր. 5 դրամագլուխ, վճարած գումարը՝ հինգ ռ.
Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Այն դպրոցները, որ 50 բաժանորդ կը տան «Աղբիւրին», նրանց կուղարկվի 5 օրինակ «Աղբիւր» չքաւոր աշակերտների համար։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ“ կամ „Таразъ“.
Tiflis (Caucase) Direction „Agbür“ կամ "Taraz".
Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ
(ե. ու.) 1234. 0—5


ՀԻՊՆՕՏԻԶՄ
ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ
Հիպնօտիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան։
Հիպնօտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը։
Հիպնօտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը։
Հիպնօզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ զանձէրի ոյժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրոններում կամ մասնաւոր սրահներում և դառէք պրոֆէսիոնալ հիպնօտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն հիպնօտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգետեսութեան և Տելեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պէտք ուղարկել 10 կոպէկի նամակագրոշմ՝ ճանապարհածախքի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 "Indiana" Ave. Chicago, Ill. U. S. A.
(Ե.Հ.) 689. 100—47